

**Դատական գործ N: ՎԴ/4392/05/11**

<b>Հայցադիմումը /դիմումը/ ստացվել է:</b>	30-08-2011
<b>Հայցվոր/դիմող</b>	
Անուն	Գեղամ
Ազգանուն	Ալավերդյան
Հայրանուն	Մաթևոսի
Հասցե	ք.Արարատ ՈԿՖ-ի բան., 10շ, 67բն
<b>Ներկայացուցիչ</b>	
Անուն	Հայկ
Ազգանուն	Եզանյան
Հայրանուն	Գագիկի
Հասցե	Արեւյան 6/1
<b>Պատասխանող</b>	
Անուն:	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
Հասցե:	Կառավարական տուն 3
Տիպ:	ՀՀ /նախարարություններ/
<b>Ինքնուրույն պահանջ ներկայացնող:</b>	
<b>3-րդ անձ</b>	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
<b>Պահանջ:</b>	վարչական մարմնի գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու և բարենպաստ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու պ/մ
<b>Հիմնական պահանջի վիճակագրության տողի համարը:</b>	2.1
<b>Պատասխանի ստացման ամսաթիվը:</b>	
<b>Լրացուցիչ պահանջի վիճակագրության տողի համարը:</b>	
<b>Ստացման կարգը:</b>	Առաջին անգամ
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ամսաթիվ:</b>	30-08-2011
<b>Պետ. տուրք (ՀՀ դրամ):</b>	0
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ամսաթիվ:</b>	30-08-2011
<b>Նախագահող դատավոր</b>	
<b>Դատարանի անվանում:</b>	Վարչական

Դատավորի անուն:	Կարեն Ավետիսյան
<b>Դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Վարչական
Դատավորի անուն:	
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ամսաթիվ:</b>	05-09-2011
<b>Որոշման հիմքը</b>	
Հոդված	ՀՀ վարչ. դատ. օր-ի 73 և 78 հոդվածներ, <<Պետական տուրքի մասին>> ՀՀօրենքի 31 հոդված
Հայցադիմումի վերադարձման որոշման ամսաթիվ:	
Ելքի համար:	
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ամսաթիվ:</b>	06-09-2011
<b>Ելքի համարը:</b>	Ե-60470
<b>Ներկայացման ամսաթիվ:</b>	14-09-2011
<b>Ամսաթիվ:</b>	22-09-2011
<b>Որոշման հիմքը</b>	
Հոդված	ՀՀ վարչ. դատ. օր-ի 73 և 78 հոդվածներ
Հայցադիմումի վերադարձման որոշման ամսաթիվ:	
Ելքի համար:	
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ամսաթիվ:</b>	30-09-2011
<b>Ելքի համարը:</b>	Ե-67409
<b>Ներկայացման ամսաթիվ:</b>	10-10-2011
<b>Ամսաթիվ:</b>	10-10-2011
<b>Պետ. տուրք (&lt;&lt; դրամ):</b>	8000
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Որոշման ամսաթիվ:</b>	17-10-2011
<b>Այլ նշումներ:</b>	07.03.2012թ. 15:00 նախնական
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	07-03-2012
<b>Ծանուցագիրը ուղարկվել է:</b>	20-01-2012

<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ժամ:</b>	15:00
<b>Նիստերի դահլիճի համար:</b>	324
<b>Նշանակվել է:</b>	Նախնական դատական նիստ
<b>Նիստը:</b>	Կայացվել է
<b>Պատճառը:</b>	
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	10-04-2012
<b>Ծանուցագիրը ուղարկվել է:</b>	07-03-2012
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ժամ:</b>	11:00
<b>Նիստերի դահլիճի համար:</b>	324
<b>Նշանակվել է:</b>	Նախնական դատական նիստ
<b>Նիստը:</b>	Կայացվել է
<b>Պատճառը:</b>	
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	02-05-2012
<b>Ծանուցագիրը ուղարկվել է:</b>	10-04-2012
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ժամ:</b>	16:00
<b>Նիստերի դահլիճի համար:</b>	324
<b>Նշանակվել է:</b>	Նախնական դատական նիստ
<b>Նիստը:</b>	Կայացվել է
<b>Պատճառը:</b>	
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	29-06-2012
<b>Ծանուցագիրը ուղարկվել է:</b>	02-05-2012
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ժամ:</b>	14:00
<b>Նիստերի դահլիճի համար:</b>	324
<b>Նշանակվել է:</b>	Նախնական դատական նիստ
<b>Նիստը:</b>	Կայացվել է
<b>Պատճառը:</b>	
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	14-08-2012
<b>Ծանուցագիրը ուղարկվել է:</b>	29-06-2012
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ժամ:</b>	11:00
<b>Նիստերի դահլիճի համար:</b>	324
<b>Նշանակվել է:</b>	Նախնական դատական նիստ
<b>Նիստը:</b>	Չի կայացվել
<b>Պատճառը:</b>	արձակուրդում գտնվելու պատճառով:

Դատաքննության ամսաթիվ:	08-11-2012
Ծանուցագիրը ուղարկվել է:	14-08-2012
Այլ նշումներ:	
Ժամ:	15:00
Նիստերի դահլիճի համար:	324
Նշանակվել է:	Նախնական դատական նիստ
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
Դատաքննության ամսաթիվ:	21-02-2013
Ծանուցագիրը ուղարկվել է:	07-12-2012
Այլ նշումներ:	
Ժամ:	12:00
Նիստերի դահլիճի համար:	324
Նշանակվել է:	Նախնական դատական նիստ
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
Դատաքննության ամսաթիվ:	26-03-2013
Ծանուցագիրը ուղարկվել է:	21-02-2013
Այլ նշումներ:	
Ժամ:	12:00
Նիստերի դահլիճի համար:	324
Նշանակվել է:	Նախնական դատական նիստ
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
Դատաքննության ամսաթիվ:	08-05-2013
Ծանուցագիրը ուղարկվել է:	26-03-2013
Այլ նշումներ:	
Ժամ:	15:30
Նիստերի դահլիճի համար:	324
Նշանակվել է:	Դատաքննություն
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
Դատաքննության ամսաթիվ:	27-05-2013
Ծանուցագիրը ուղարկվել է:	08-05-2013
Այլ նշումներ:	2013 թ-ի մայիսի 27-ի ոչ աշխատանքային օր լինելու պատճառով վճռի հրապարակումը տեղափոխվել է 2013 թ-ի մայիսի 29-ին
Ժամ:	09:52
Նիստերի դահլիճի համար:	324
Նշանակվել է:	Վճիռ/որոշում հրապարակելու օր
Նիստը:	Կայացվել է

<b>Պատճառը:</b>	
<b>Հայցի լուծման ամսաթիվ:</b>	29-05-2013
<b>Հայցի լուծումը:</b>	Մերժվել է
<b>Հոդված</b>	
Հոդված	59 112 113 114 115 130 131 132 35
<b>Հակընդդեմ հայցի լուծումը:</b>	
<b>Հակընդդեմ հայցի լուծման ամսաթիվ:</b>	
<b>Այլ նշումներ:</b>	ՀՀ վարչական դատավարության և դատական օրենսգիրք
<b>Օրենսգիրք:</b>	Քաղաքացիական դատավարության օրենսգիրք
<b>Դատական ակտ:</b>	<p>Վարչական գործ ՎԴ/4392/05/11 2013թ.</p> <p><b>Վ Ճ Ի Ռ</b></p> <p>ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 29.05.2013թ. ք.Երևան</p> <p>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ</p> <p>Նախագահող դատավոր Կ. Ավետիսյան, քարտուղարությամբ՝ Ն. Հովակիմյանի, մասնակցությամբ՝ հայցվոր Պեղամ Ալավերդյանի ներկայացուցիչ Հայկ Եգանյանի,</p> <p>պատասխանող ՀՀ գյուղատնտեսության նախարարության, (ներկայացուցիչ Տ. Սիմոնյան),</p> <p>երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության, (ներկայացուցիչ Հ. Աջեմյան),</p> <p>դռնբաց դատական նիստում քննելով վարչական գործն ըստ հայցի Պեղամ Ալավերդյանի ընդդեմ ՀՀ գյուղատնտեսության նախարարության, ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության, երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վարչական մարմնի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու և հետևանքներ կիրառելու պահանջի մասին,</p> <p><b>Պ Ա Ր Զ Ե Ց</b></p> <p>1. Գործի դատավարական նախապատմությունը: Դիմելով դատարան՝ Պեղամ Ալավերդյանը խնդրել է ոչ իրավաչափ ճանաչել 2007 թվականին արձանագրված խոզերի աֆրիկյան</p>

Ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերի ցուցակից հայցվորին հանելու ՀՀ գյուղատնտեսության նախարարության գործողությունը և պարտավորեցնել պատասխանողներին հայցվորին վերականգնել այդ ցուցակում:

ՀՀ վարչական դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 17-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ, հրավիրվել և անցկացվել են նախնական դատական նիստեր:

ՀՀ վարչական դատարանի 2012 թվականի մարտի 07-ի որոշմամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը սույն վարչական գործով ներգրավվել է դատավարության մեջ որպես երրորդ անձ:

ՀՀ վարչական դատարանի 2012 թվականի հունիսի 29-ի որոշմամբ

ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը ներգրավվել է որպես երկրորդ պատասխանող:

ՀՀ վարչական դատարանի 2013 թվականի մարտի 26-ի որոշմամբ գործը նշանակվել է դատաքննության:

2. Հայցվորի իրավական դիրքորոշումը:

ՀՀ Արարատի մարզի Ռանչպար համայնքում 2007 թվականի նոյեմբեր ամսին արձանագրված խոզերի աֆրիկյան ժանտախտ հիվանդության հետևանքով հարկադիր կարգով ոչնչացվել է Գեղամ Սաթևոսի Ալավերդյանին պատկանող 504 գլուխ կենդանի խոզ, որոնց ընդհանուր քաշը կազմել է 20,880կգ: Խոզերի հարկադիր սպանդի արդյունքներով 2007 թվականի նոյեմբերի 27-ին իրավասու մարմինների կողմից կազմվել է դիախերծման թիվ 32 ակտը և հարկադիր ոչնչացված կենդանիների ամփոփագիրը:

ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 07-ի թիվ 84-Ն որոշման 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում 2007 թվականին արձանագրված խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերին օժանդակություն ցույց տալու նպատակով Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին 2008 թվականի առաջին եռամսյակում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը հատկացվել է 4.795.483.000 ՀՀ դրամ: Սույն որոշման 2-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում 2007 թվականին արձանագրված խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության բռնկման պատճառով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերին տրամադրվող օժանդակության գումարի չափը՝ կենդանիների մեկ կիլոգրամ մսեղիքի հաշվով, սահմանվել է 1005,0 ՀՀ դրամ:

Հետագայում ՀՀ կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 04-ի թիվ 1415-Ա որոշմամբ կատարվել է փոփոխություն ՀՀ

կառավարության 2008 թվականի փետրվարի 07-ի թիվ 84-Ա որոշման 1-ին կետում, որով օժանդակության չափը 4.795.483.000 ՀՀ դրամի փոխարեն սահմանվել է 3.585.483.000 ՀՀ դրամ:

ՀՀ կառավարության վերոհիշյալ որոշումից ելնելով, օժանդակություն ստանալու նպատակով հայցվորը դիմել է ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը՝ ներկայացնելով խոզերի հարկադիր սպանդի արդյունքներով 2007 թվականի նոյեմբերի 27-ին կազմված դիախերծման թիվ 32 ակտը, հարկադիր ոչնչացված կենդանիների ամփոփագիրը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր: Դրանից հետո հայցվորը մի քանի անգամ հանդիպել է տվյալ խնդրով զբաղվող իրավասու պաշտոնատար անձանց, որոնք բանավոր հավաստիացրել են, որ անհանգստանալու պատճառ չկա և անպայման կստանա սահմանված օժանդակությունը: Չնայած նշված խոստումներին, խնդիրը պատշաճ լուծում չի ստացել և հայցվորին օժանդակություն չի տրամադրվել:

Հաշվի առնելով նշված հանգամանքը՝ հայցվորը <Շահերի

պաշտպանության և աջակցության կենտրոն>-ի միջոցով 2011 թվականի հունվարի 14-ին թիվ 003/11 գրությամբ դիմել է ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը՝ խնդրելով տալ պարզաբանումներ օժանդակության չտրամադրման պատճառների մասին:

Ի պատասխան վերը հիշատակված գրության՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը, հղում կատարելով ՀՀ կառավարության ներքին աշխատանքային փաստաթղթի (2008 թվականի փետրվարի 07-ի նիստի թիվ 5 արձանագրություն) 32-րդ հարցի 2-րդ կետի 1-ին ենթակետին, հայտնել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարին հանձնարարվել է ճշտել 2007 թվականին արձանագրված խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադրի սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերի ցուցակը՝ այնտերից հանելով խոշոր տնտեսավարող սուբյեկտներին:

Սակայն նշված գրությամբ չի մասնավորեցվել, թե արդյոք հայցվոր Քեղամ Ալավերդյանը հանդիսանում է խոշոր տնտեսավարող սուբյեկտ, թե ոչ, ինչ չափանիշներով, ինչ հիմքով է դասակարգվել <խոշորը> և <ոչ խոշորը>, և վերջապես չի նշվել թե արդյոք Քեղամ Ալավերդյանին օժանդակություն տրամադրվելու է, թե ոչ:

Վերը նշվածից ելնելով՝ հայցվորը ստիպված է եղել երկրորդ անգամ 2011 թվականի հունիսի 29-ին փաստաբանական հարցմամբ դիմել ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը՝ խնդրելով վերջապես պարզաբանել, թե արդյոք Քեղամ Ալավերդյանին տրամադրվելու է օժանդակություն, թե ոչ: Եթե այո, ապա երբ, իսկ եթե ոչ, ապա խնդրել է տրամադրել մերժման հիմնավորումներն ու դրա իրավական հիմքերը:

Ի պատասխան վերոհիշյալ հարցման՝ 2011 թվականի օգոստոսի 11-ին ստացվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2011 թվականի հուլիսի 22-ի թիվ 348 գրությունը, որից պարզվել է, որ վերոհիշյալ ցուցակից հանվել է հայցվորի տվյալները, որի արդյունքում Քեղամ Ալավերդյանին օժանդակություն չի տրամադրվելու: Հիմնավորումներ ու իրավական հիմքեր նշված գրությամբ չի ներկայացվել: Նշված գրությամբ չի ներկայացվել նաև այն վարչական ակտը, որով իրավասու մարմինը վերացրել կամ սահմանափակել է հայցվոր Քեղամ Ալավերդյանի օժանդակություն ստանալու իրավունքը:

Ըստ հայցվորի ՀՀ գյուղատնտեսության նախարարության գործողություններն իրավաչափ չեն, չեն բխում ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 07-ի թիվ 84-Ն որոշման պահանջներից, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են

Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Նշված սահմանադրական նորմը, ամրագրելով իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը, միաժամանակ օրենսդրին հասցեագրել է հիմնարար առաքելություն՝ օրենքների հիման վրա որոշելու պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց իրավասությունը (լիազորությունը)՝ իշխանությունն իրականացնելիս:

<Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով կարգավորման ենթակա է օրենքով չկարգավորված ցանկացած հարաբերություն, եթե այդ հարաբերությունը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենքով կամ Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով ու կարգադրությամբ չպետք է կարգավորվի իրավական այլ ակտերով:

Տվյալ դեպքում 2007 թվականին արձանագրված խոզերի

աֆրիկական ժանտախտ հիվանդությունը և դրա հետևանքների վերացումը մասնավոր երևույթ է և բնականաբար հնարավոր չէր կանխատեսել և օրենքով կարգավորել նման իրավահարաբերությունների ծագումը, փոփոխումը և դադարեցումը, հետևաբար նմանատիպ հարաբերությունների կարգավորման իրավասությունը ՀՀ օրենսդրությամբ վերապահվել է ՀՀ կառավարությանը, որն էլ 2008 թվականի փետրվարի 07-ին ընդունել է թիվ 84-Ն որոշումը: Ընդ որում՝ նշված որոշումը նորմատիվային է, քանի որ այն ուղղված է 2007 թվականին արձանագրված խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերին օժանդակություն տրամադրելու նորմերի սահմանմանը: Հետևաբար ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը և (կամ) յուրաքանչյուր պաշտոնատար անձ նշված իրավահարաբերությունների կարգավորման շրջանակներում պետք է ղեկավարվի միայն ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 07-ի թիվ 84-Ն որոշման պահանջներով:

Մինչդեռ, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը, ի դեմս սննդամթերքի անվտանգության պետական ծառայության, մերժել է հայցվոր Գեղամ Ալավերդյանին օժանդակություն տրամադրելու պահանջն այնպիսի հիմնավորմամբ, ինչպիսին ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 07-ի թիվ 84-Ն որոշումը չի նախատեսում: Ավելին՝ ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 07-ի թիվ 84-Ն որոշումը չի տարբերակում «խոշոր» և «ոչ խոշոր» սուբյեկտ հասկացություններ, չի սահմանում օժանդակության տրամադրման որևէ բացառություն և (կամ) վերապահում: Հետևաբար միանշանակ պետք է ենթադրել, որ վարչական մարմինը և (կամ) դրա պաշտոնատար անձինք պարտավոր էին տրամադրել օժանդակություն բոլոր տուժած սուբյեկտներին, անկախ վերջիններիս գործունեության ծավալներից: Հարկ է նշել նաև, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ հայցվորն արդարացիորեն շահագրգռված է պահանջել ձանձախու ոչ իրավաչափ 2007 թվականին արձանագրված խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերի ցուցակից Գեղամ Ալավերդյանին հանելու ՀՀ գյուղատնտեսության նախարարության գործողությունը, քանի որ օժանդակություն ստանալու իրավունքից զրկելու պատճառով վերջինս մտադիր է պահանջել գույքային վնասի հատուցում:

Ինչ վերաբերվում է գրություններում վկայակոչված, սակայն հայցվորին չտրամադրված թիվ 5 արձանագրությանը, ապա նշված արձանագրությունը չի կարող իրավունք սահմանափակող կամ որևէ նորմատիվային դրույթ պարունակող իրավական ակտ համարվել: Այն ընդամենը հանդիսանում է ներքին աշխատանքային փաստաթուղթ և ուղղված է միայն ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 07-ի թիվ 84-Ն որոշմամբ սահմանված գործընթացի կազմակերպմանը: Հետևաբար դրանով չի կարող փոփոխվել ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 07-ի թիվ 84-Ն որոշման նորմատիվային դրույթները կամ սահմանվել այնպիսի պայման, որը կհակասի այն ակտին, ի կատարումն որի ընդունվել է նշված աշխատանքային փաստաթուղթը: Հակառակ դեպքում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի և 70-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 07-ի թիվ 84-Ն որոշման մեջ յուրաքանչյուր փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել միայն նույն տեսակի, այսինքն՝ նորմատիվ իրավական ակտով, ինչը տվյալ դեպքում բացակայում է:

Ուստի միանշանակ պետք է արձանագրել, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության վարչարարությունն՝ ուղղված հայցվորին օժանդակության տրամադրման մերժմանը, եղել է ոչ օրինական, ինչը հանդիսանում է «վարչարարության հիմունքների և



վարչական վարույթի մասին> << օրենքի 4-րդ հոդվածով սահմանված օրինականության հիմնարար սկզբունքի խախտում: Ղատաքնության ընթացքում հայցվորի ներկայացուցիչը խնդրեց հիմք ընդունել հայցադիմումում վկայակոչված փաստարկները և հայցը բավարարել՝ ի լրումն ներկայացնելով հետևյալ հիմնավորումները:

<< ֆինանսների նախարարության պատասխանից պարզվում է, որ նախարարության միակ փաստարկը կայանում է նրանում, որ Գեղամ Ալավերդյանն իբր չի կարող օգտվել օժանդակության ստանալու իր իրավունքից, քանի որ նրա կողմից չի պահպանվել << կառավարության 2008 թվականի հունվարի 31-ի թիվ 82-Ն որոշման հավելվածով սահմանված ընթացակարգը: Ըստ հայցվորի՝ վերը նշված պնդումն անհիմն է և չի կարող հայցի մերժման հիմք հանդիսանալ, հետևյալ պատճառաբանությամբ.

<< կառավարության 2008 թվականի հունվարի 31-ի թիվ 82-Ն նորմատիվ որոշման հիման վրա ընդունվել է << կառավարության 2008 թվականի փետրվարի 07-ի թիվ 84-Ա որոշումը: Նշված որոշմամբ << գյուղատնտեսության նախարարությանը գումարը հատկացվել է 2007 թվականի ընթացքում անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերին օժանդակություն ցույց տալու նպատակով, միաժամանակ, սահմանվել է նաև օժանդակության գումարի չափը՝ մեկ կիլոգրամ մսեղիքի համար: Ուստի ակնհայտ է, որ Գեղամ Ալավերդյանին 2007 թվականին անկած կամ հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների համար օժանդակության գումարի տրամադրումը պետք է լիներ << կառավարության 2008 թվականի փետրվարի 07-ի թիվ 84-Ա որոշման կիրառմամբ, որը ընթացակարգի պարտադիր պահպանման պայման չի նախատեսում: << կառավարության նշված որոշումների կիրառմամբ անձին օժանդակություն տրամադրելու որոշումը նորմատիվ իրավական ակտի հիման վրա ընդունվող բարենպաստ վարչական ակտ է, որի ընդունմանն ուղղված գործունեությունն էլ համարվում է վարչական վարույթ, համաձայն <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> << օրենքի 19-րդ հոդվածի:

Վարչական վարույթի փուլերից է վարչական վարույթի հարուցումը, որը տվյալ դեպքում՝ եղել է Գեղամ Ալավերդյանի դիմումի հիման վրա:

<< կառավարության 2007 թվականի սեպտեմբերի 06-ի թիվ 1108-Ն որոշման 1-ին հավելվածի 9-րդ կետի համաձայն՝ տեղական հանձնաժողովները ստեղծվում են մարզերում, տարածաշրջաններում և համայնքներում, իսկ 15-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ համայնքի հանձնաժողովի կազմում ընդգրկվում են համայնքի ղեկավարը՝ որպես տեղական հանձնաժողովի նախագահ, համայնքի անասնաբույժը՝ որպես հանձնաժողովի նախագահի տեղակալ, և հանձնաժողովի անդամների կարգավիճակով համայնքի հաշվապահը, ավագանու անդամը և այլն: Այսինքն՝ տեղական հանձնաժողովին դիմելը կնշանակի դիմել հանձնաժողովի նախագահին, որպիսին համարվում է համայնքի ղեկավարը:

Սույն վարչական գործում առկա Գեղամ Ալավերդյանին պատկանող <<< Արարատի մարզի Ռանչպար համայնքում 2007 թվականի նոյեմբեր ամսին արձանագրված խոզերի աֆրիկյան ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր ոչնչացված կենդանիների> ամփոփագիրը ստորագրված է համայնքի ղեկավարի, համայնքապետի տեղակալի, համայնքի անասնաբույժի և ավագանու կողմից, իսկ դիմադրման 2007 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 32 ակտը ստորագրվել են <<անրապետական անասնաբուժական հակահամաճարակային և այխորոշիչ կենտրոն> ՊՈԱԿ-ի մասնագետ-ախտաբանաանատոմ Ա.Խաչատրյանի, համաճարակաբան Գ.Վարդանյանի և << գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական պետական

տեսչության Մասիսի տարածաշրջանի անասնաբուժական տեսչության պետ Հ.Գաբրիելյանի կողմից:

Վերը նշված փաստաթղթերով հաստատվում է, որ հայցվոր Պեղամ Ալեվարոյանը դիմել է հանձնաժողովի նախագահին, իսկ մնացած գործողություններն արդեն պետք է կատարվեին և կատարվել են հանձնաժողովի նախագահի գլխավորությամբ:

Նշված փաստերը վկայում են, որ հայցվոր Պեղամ Ալեվարոյանը պատշաճ կատարել է համաձայնակի մասին անհապաղ տեղեկացնելու իր պարտականությունը:

Բացի այդ, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունն ընդունել է խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով 504 գլուխ խոզերի անկման փաստը: Ընդ որում՝ թե՛ ՀՀ

գյուղատնտեսության նախարարությունը, և թե՛ ՀՀ ֆինանսների նախարարությունը հիվանդության տեսակի, համաձայնակի մասով որևէ առարկություն չեն ներկայացրել: Հայցվորին օժանդակություն չտրամադրելու պատճառն էլ ՀՀ գյուղատնտեսության

նախարարությունը պատճառաբանել է նրանով, թե իբր ՀՀ կառավարության ներքին աշխատանքային փաստաթղթի (2008 թվականի փետրվարի 07-ի նիստի թիվ 5 արձանագրություն) 32-րդ հարցի 2-րդ կետի 1-ին ենթակետով որոշվել է խոշոր տնտեսվարող սուբյեկտներին օժանդակություն չտրամադրել: Այլ

պատճառաբանություն (այդ թվում՝ ընթացակարգի խախտման մասին) վարչական որևէ մարմին հայցվորին չի ներկայացրել:

Հետևաբար պետք է միանշանակ արձանագրել, որ խոզերի աֆրիկյան ժանտախտ հիվանդության դեմ պայքարի

աշխատանքների կազմակերպման և ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 31-ի թիվ 82-Ն որոշման հավելվածով

սահմանված ընթացակարգի պահպանման պատասխանատվությունը ՀՀ կառավարության 2007 թվականի

սեպտեմբերի 06-ի թիվ 1108-Ն որոշման 111-րդ բաժնի 7-րդ կետի համաձայն կրում է ոչ թե տնտեսվարող սուբյեկտը, այլ վարչական մարմինը, տվյալ դեպքում՝ ՀՀ գյուղատնտեսության

նախարարությունը:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից վկայակոչված ՀՀ կառավարության թիվ 82-Ն որոշումը ուժի մեջ է մտել 2008 թվականի փետրվարի 14-ին, մինչդեռ հայցվորի 504 գլուխ կենդանիները խոզերի աֆրիկյան ժանտախտ հիվանդության

պատճառով հարկադիր սպանողի են ենթարկվել և համապատասխան ակտն ու ամփոփողփորը կազմվել է 2007

թվականի նոյեմբերի 27-ին, ուստի եթե մի պահ ընդունենք ՀՀ ֆինանսների նախարարության դիրքորոշումը, ապա ամենամեծ

ցանկության դեպքում հայցվորը չէր կարող առաջնորդվել այդ պահին դեռևս գոյություն չունեցող իրավական ակտով սահմանված

ընթացակարգով:

Նման իրավիճակում, հաշվի առնելով ՀՀ ֆինանսների նախարարության դիրքորոշումը, ինչպես նաև ՀՀ

գյուղատնտեսության նախարարության կողմից հայցադիմումի պատասխան չներկայացնելու փաստը, հայցվորը գտնում է, որ վեճի ճիշտ լուծման համար հիմք պետք է հանդիսանա նաև սահմանված

ժամկետում վարչական ակտ չընդունելու հանգամանքը, որի հիման վրա պետք է կիրառվի <Վարչարարության հիմունքների և

վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի ա) կետը, ըստ որի՝ դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի

արդյունքում օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմնի կողմից այդ

ակտը չընդունվելու դեպքում՝ վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան

իրավունքի իրականացմանը: Սույն պարագայում ակնհայտ է, որ օժանդակություն տրամադրելու մասին համապատասխան որոշման

բացակայության պայմաններում առկա են <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի ա) կետի կիրառման հիմքերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետի համաձայն՝ ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ոչ իրավաչափ ճանաչելու այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ գործողությունը, եթե հայցվորն արդարացիորեն շահագրգռված է ակտը կամ գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու մեջ, այսինքն՝ առկա է նմանատիպ իրավիճակում նմանատիպ միջամտող վարչական ակտ կրկին ընդունելու կամ գործողություն կրկին կատարելու վտանգ, կամ հայցվորը մտադիր է պահանջել գույքային վնասի հատուցում:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն <...գործողության կատարման կամ ճանաչման հայցի հետ կարող է ներկայացվել պահանջ այն հետևանքները վերացնելու մասին, որոնք առաջացել են... վիճարկվող գործողության ...հետևանքով>:

Վեճի առարկա գործողությունը, այսինքն՝ 2007 թվականին արձանագրված խոզերի աֆրիկյան ժանտախտ հիվանդության հետևանքով անկաճ և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների համար օժանդակություն ստանալու իրավունք ունեցող սեփականատերերի ցուցակից Քեղամ Ալավերդյանին հանելու պահից ՀՀ գյուղատնտեսության նախարարության գործողությունը այլևս իրավաբանական ուժ չունի, այն ոչ իրավաչափ գործողություն է, քանի որ վարչական մարմինը չի ներկայացրել որևէ հիմնավորող ապացույց, մասնավորապես՝ այն վարչական ակտը, որով նա իրավասու էր վերացնել կամ սահմանափակել հայցվորի օժանդակություն ստանալու իրավունքը: Հայցվորի համոզմամբ լիարժեք կարող է օգտվել 2007 թվականին արձանագրված խոզերի աֆրիկյան ժանտախտ հիվանդության հետևանքով անկաճ և հարկադիր սպանդի ենթարկված 504 գլուխ կենդանիների համար օժանդակություն ստանալու իրավունքից:

### 3. Պատասխանողի իրավական դիրքորոշումը:

Պատասխանող ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը ներկայացրել է հայցադիմումի պատասխան՝ վկայակոչելով հետևյալ առարկությունները:

2007 թվականին ՀՀ-ում արձանագրված խոզի աֆրիկյան ժանտախտ հիվանդության հետևանքով անկաճ և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերին տրամադրվող օժանդակության կարգի և պայմանների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ կառավարության համապատասխանաբար 82-Ն և 84-Ա որոշումներով:

Մասնավորապես, թիվ 82-Ն որոշմամբ սահմանվել է օժանդակություն ցուցաբերելու կարգը, այն ստանալու համար սեփականատիրոջ կողմից իրականացվող գործողությունները, իսկ 84-Ա որոշմամբ՝ տրամադրվող ընդհանուր օժանդակության չափը՝ գումարային արտահայտությամբ:

Վկայակոչված թիվ 82-Ն որոշմամբ սահմանվել է հստակ ընթացակարգ, որը սույն դեպքում հայցվորի կողմից չի պահպանվել, հետևաբար հայցվորը չի կարող հավակնել օժանդակություն ստանալուն: Հաջորդիվ՝ հայցվորի կողմից ներկայացված դիմադրման ակտը որևէ ապացուցողական ուժ չունի, քանի որ չի կազմվել և ստորագրվել Մարզային հանձնաժողովի կողմից:

Ղատաքնության ընթացքում պատասխանողի ներկայացուցիչը պնդեց հայցադիմումի պատասխանում վկայակոչված առարկությունները և խնդրեց հայցը մերժել:

### 3.1 Պատասխանողի իրավական դիրքորոշումը:

Պատասխանող ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը հայցադիմումի պատասխան չի ներկայացրել: Ղատակյան նիստում պատասխանողի ներկայացուցիչը հայցի դեմ

առարկել է՝ միանալով ՀՀ գյուղատնտեսության նախարարության ներկայացուցչի դիրքորոշմանը:

Ղատաքնության համար հրավիրված դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ձևով տեղեկացված պատասխանողի որևէ ներկայացուցչի նիստին չի ներկայացել: Ղատարանը, ղեկավարվելով ՀՀ վարչական դատարավարության օրենսգրքի 95-րդ հոդվածով, որոշեց գործը քննել պատասխանողի բացակայությամբ:

4. Երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության իրավական դիրքորոշումը:

ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 07-ի թիվ 84-Ն որոշման 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում 2007 թվականին արձանագրված խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերին օժանդակություն ցույց տալու նպատակով Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին 2008 թվականի առաջին եռամսյակում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը հատկացնել 3.585.483.000 ՀՀ դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից»:

2011 թվականի հունվարի 14-ին, 2011 թվականի հունիսի 29-ին Գեղամ Լվավերոյանը դիմել է պատասխանողին՝ օժանդակություն ստանալու նպատակով: 2011 թվականի հուլիսի 22-ին ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական պետական տեսչության գրությամբ հայցվորը տեղեկացվել է, որ իր տվյալները հանվել են օժանդակություն ստացողների ցուցակից:

2007 թվականին Հայաստանի Հանրապետությունում արձանագրված խոզի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերին տրամադրվող օժանդակության կարգի և պայմանների հետ կապված հարաբերությունները կարգավորված են ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 31-ի թիվ 82-Ն և 2008 թվականի փետրվարի 07-ի թիվ 84-Ն որոշումներով:

Ի սկզբանե պետք է նշել, որ հիշյալ որոշումների ուսումնասիրությունից ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետությունը որևէ կերպ պատասխանատվություն չի կրում որևէ անասնահամաճարակի հետևանքով որևիցե սեփականատիրոջը պատճառված վնասի փոխհատուցման առումով:

Այնուամենայնիվ, ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 31-ի «Անասնահամաճարակի հետևանքով գյուղատնտեսական կենդանիների անկումների և հարկադիր սպանդի դեպքում սեփականատիրոջը ցուցաբերվող օժանդակության կարգը հաստատելու մասին» թիվ 82-Ն որոշմամբ, որպես բարի կամքի դրսևորում, որոշվել է անասնահամաճարակների հետևանքով հարկադիր սպանդի ենթարկված գյուղատնտեսական կենդանիների սեփականատերերին տրամադրել օժանդակություն, հաստատվել է անասնահամաճարակների հետևանքով հարկադիր սպանդի ենթարկված գյուղատնտեսական կենդանիների անկումների և հարկադիր սպանդի դեպքում սեփականատիրոջը ցուցաբերվող օժանդակության կարգը թիվ 1 հավելվածի համաձայն, անասնահամաճարակների հետևանքով գյուղատնտեսական կենդանիների անկումների և հարկադիր սպանդի դեպքում օժանդակության ենթակա սեփականատերերի գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների ցանկը՝ համաձայն որոշման թիվ 2 հավելվածի և անասնահամաճարակների հետևանքով անկած կամ հարկադիր սպանդի ենթարկված

գյուղատնտեսական կենդանիների սեփականատերերին ցուցաբերվող օժանդակության կազմակերպման ազգային հանձնաժողովի կազմը՝ թիվ 3 հավելվածի համաձայն:  
Համաձայն հավելվածի 5-րդ կետի՝ անասնահամաձարակների հետևանքով անկած կամ հարկադիր սպանդի ենթարկված գյուղատնտեսական կենդանիների ցուցաբերվող օժանդակության կազմակերպման համար ՀՀ կառավարությունը ստեղծում է ազգային հանձնաժողով:

Հավելվածի 8-րդ կետով սահմանվում են հանձնաժողովի գործառույթները, որոնցից են՝ հարկադիր սպանդի ենթարկված գյուղատնտեսական կենդանիների մասին տվյալների շտեմարանի ձևավորումը (Հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետ), լիազոր մարմին անկած կամ հարկադիր սպանդի ենթարկված գյուղատնտեսական կենդանիների համար սեփականատերերին պատճառված վնասի դիմաց տրամադրվող օժանդակության գումարի չափի վերաբերյալ առաջարկություն ներկայացնելը (Հավելվածի 8-րդ կետի 3-րդ ենթակետ) և հարկադիր սպանդի ենթարկված գյուղատնտեսական կենդանիների սեփականատերերին ցուցաբերված օժանդակության գործընթացի նկատմամբ վերահսկողություն իրականացնելը (Հավելվածի 8-րդ կետի 5-րդ ենթակետ):

Հավելվածի 9-րդ կետի համաձայն՝ ՀՀ մարզերում գյուղատնտեսական կենդանիների հարկադիր սպանդի գործընթացի կազմակերպման նպատակով ՀՀ մարզերում ստեղծվում են մարզային հանձնաժողովներ:

Հավելված 11-րդ կետով սահմանվում է մարզային հանձնաժողովի կազմը՝ լիազոր մարմնի մարզային կառույցների համապատասխան մարզպետարանների ստորաբաժանումների, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տարածքային ստորաբաժանումների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև անասնաբույժեր և տնտեսվարողներ:

Հավելվածի 13-րդ կետի համաձայն՝ մարզային հանձնաժողովի հիմնական խնդիրը մարզում անասնահամաձարակների բռնկման ու տարածման կանխարգելման գործընթացի համակարգումը և այդ բնագավառում անհրաժեշտ կազմակերպման միջոցառումների իրականացումն է:

Մարզային հանձնաժողովի գործառույթները սահմանված են Հավելվածի 14-րդ կետով, այն է՝ ֆիզիկական և իրավաբանական անձնաց պատկանող՝ հատուկ վարակիչ հիվանդություններով վարակված գյուղատնտեսական կենդանիների ցանկի ճշտում և շտեմարանի ստեղծում (Հավելվածի 14-րդ կետի 3-րդ ենթակետ), հարկադիր սպանդի ենթարկված գյուղատնտեսական կենդանիների պատճառած վնասի համար տրամադրվող օժանդակության գործընթացի հրապարակայնության ապահովումը և լիազոր մարմին օժանդակության գումարի չափի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը (Հավելվածի 14-րդ կետի 4-րդ ենթակետ):

Հավելվածի 16-րդ կետի համաձայն՝ անասնահամաձարակների կամ հարկադիր սպանդի ենթարկված գյուղատնտեսական կենդանիների սեփականատերերին օժանդակությունը տրամադրվում է մարզային հանձնաժողովների կողմից կազմված ակտերի հիման վրա: Ակտերը կազմվում են 3 օրինակից:

Հավելվածի 17-րդ կետի համաձայն՝ ակտի ձևը սահմանում է լիազոր մարմինը:

Հավելվածի 18-րդ կետով սահմանվում է՝ գյուղատնտեսական կենդանիների անկումները գրանցելուց կամ հարկադիր սպանդի իրականացնելուց հետո մեկ շաբաթյա ժամկետում մարզային հանձնաժողովն ակտերի առաջին օրինակները և ակտերի ամփոփման արդյունքները ներկայացնում է հանձնաժողովին:

Իսկ Հավելվածի 19-րդ կետով նշվում է, որ Հանձնաժողովը երկշաբաթյա ժամկետում քննարկում է մարզային

հանձնաժողովների կողմից ներկայացված ակտերը, ընդունում է որոշում գյուղատնտեսական կենդանիների սեփականատերերին ցուցաբերվող օժանդակության ձևի և գումարի չափի վերաբերյալ և լիազոր մարմին ներկայացնում առաջարկություն:

Վերոգրյալը միտում ունի փաստելու այն հանգամանքը, որ որոշմամբ սահմանվել է հստակ ընթացակարգ ՀՀ կողմից տրամադրվող օժանդակությունը ստանալու համար, այսինքն՝ Հայցվորի կողմից.

1. Պետք է դիմում ներկայացվեր համապատասխան մարզային հանձնաժողովին, այլ ոչ թե ազգային հանձնաժողովին կամ գյուղատնտեսության նախարարությանը:

2. Մարզային հանձնաժողովի կողմից պետք է կազմվեր (ին) համապատասխան ձևի, համապատասխան ակտ (եր):

3. Մարզային հանձնաժողովի կողմից կազմված ակտերից 1-ին օրինակները 1 շաբաթյա ժամկետում պետք է ներկայացվեին ազգային հանձնաժողովին:

4. Ազգային հանձնաժողովը երկշաբաթյա ժամկետում քննարկելով համապատասխան մարզային հանձնաժողովի կողմից կազմված ակտերը կընդուներ որոշում գյուղատնտեսական կենդանիների սեփականատերերին ցուցաբերվող օժանդակության ձևի և գումարի չափի վերաբերյալ և առաջարկություն կներկայացներ լիազոր մարմին:

5. Լիազոր մարմինը ազգային հանձնաժողովի որոշման հիման վրա զանձապետական համակարգի միջոցով, կտրամադրեր համապատասխան օժանդակությունը (Հավելվածի 20-րդ կետ):

Իսկ սույն գործի շրջանակներում հայցվորի կողմից ոչ միայն սահմանված ընթացակարգը չի պահպանվել, այլ իր կողմից պնդած փաստերի հաստատման համար դատարանին են ներկայացել 2007 թվականի նոյեմբերի 27-ի խոզերի հերձման վերաբերյալ թիվ 32 ակտը, որը որևէ կերպ որպես համապատասխան մարզային հանձնաժողովի կողմից կազմված ակտ չի կարող դիտվել (նույն հաջողությամբ հայցվորի կողմից դատարանին կարող էին ներկայացվել նաև որևէ թաղային լիազորի, ՀՀ ցանկացած քաղաքացու կողմից կազմված ակտեր, որոնք բնականաբար որևէ ապացուցողական ուժ չէին կարող ունենալ որոշման կիրառման համար): Եթե նույնիսկ մի պահ վերացականորեն ընդունենք այն փաստը, որ հայցվորի կողմից դատարանին ներկայացված վերը նշված ակտը կարելի է դիտել որպես մարզային հանձնաժողովի կողմից կազմված ակտ, ապա այդ դեպքում էլ պետք է փաստել, որ վերը նշված հանձնաժողովի կազմը չի համապատասխանում Հավելվածի 11-րդ կետով սահմանված մարզային հանձնաժողովների կազմին, այսինքն՝ վերը նշված ակտերը կազմվել են դրանք կազմելու իրավասություն չունեցող հանձնաժողովի կողմից:

Նման պայմաններում հաշվի առնելով բերված փաստերն ու հիմնավորումները, պարզ է դառնում, որ որոշման ուժով հայցվորին չի կարող տրամադրվել օժանդակության համապատասխան գումար, քանի որ հայցվորի կողմից որոշմամբ սահմանված ընթացակարգը չի պահպանվել. հայցվորի կողմից դատարան ներկայացված ակտը կազմված չէ որոշման համապատասխան մարզային հանձնաժողովների կողմից, ուստի խոսք՝ որոշման դրույթների հայցվորին վերաբերելիության մասին լինել չի կարող: Ավելին, հայցվորի կողմից դատարանին ներկայացված 2007 թվականի նոյեմբերի 27-ի խոզերի հերձման վերաբերյալ կազմված ակտը, որևէ կերպ չի կարող ապացուցողական ուժ ունենալ, քանի որ կազմված չէ մարզային հանձնաժողովների կողմից և մարզային հանձնաժողովների կազմին առաջադրվող պայմանները նույնպես պահպանված չեն, ինչի պայմաններում էլ հայցվորի պահանջն ակնհայտ անհիմն է և ենթակա է մերժման:

Դատաքննության ընթացքում երրորդ անձի ներկայացուցիչը խնդրեց հիմք ընդունել հայցադիմումի պատասխանում վկայակոչված առարկությունները և հայցը մերժել:

5. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը, դատարանի իրավական վերլուծությունները և եզրահանգումը: Լսելով դատավարության մասնակիցների բացատրությունները, հետազոտելով և գնահատելով ներկայացված ապացույցները՝ դատարանը եզրակացրեց, որ հայցը ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ:

Գործի քննությամբ պարզվեց, որ ՀՀ Արարատի մարզի Ռանչպար համայնքում բռնկված խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության պատճառով անկել են նաև հայցվորին պատկանող կենդանիները, ինչի վերաբերյալ 2007 թվականի նոյեմբերի 27-ին կազմվել է թիվ 32 իսհերձման ակտը: Ընդ որում՝ ակտում նշվել է, որ կենդանիները ենթարկվել են հարկադիր սպանդի: Նշված ակտի հիման վրա կազմվել է նաև համապատասխան ամփոփագիր, որը ստորագրվել է Ռանչպար համայնքի ղեկավարի, նրա տեղակալի, համայնքի անասնաբույժի և ավագանու անդամի կողմից: Նկատենք՝ դիտարկված ակտի կազմման պահին կարգավորված չեն եղել Հայաստանի Հանրապետությունում 2007 թվականին արձանագրված խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերին օժանդակություն ցույց տալու հետ կապված հարաբերությունները: Դրանք կարգավորվել են ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 31-ի թիվ 82-Ն և ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 07-ի թիվ 84-Ա որոշումներով: Հետևապես դատարանի համոզմամբ սույն իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի են վկայակոչված որոշումներն՝ այն հաշվառմամբ, որ դրանցով, մասնավորապես՝ ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 31-ի թիվ 82-Ն որոշմամբ, սահմանվում է Հայաստանի Հանրապետությունում անասնահամաճարակների բռնկման պատճառով գյուղատնտեսական կենդանիների անկումների և դրանց տարածման կանխարգելման նպատակով հարկադիր սպանդի ենթարկված անասնազխաքանակի արժեքի դիմաց սեփականատեր ֆիզիկական և իրավաբանական անձանց օժանդակություն ցույց տալու կարգը, ինչպես նաև համապատասխան ընթացակարգերը, լիազոր մարմինը և մեխանիզմները, որոնց հիման վրա իրականացվում է օժանդակության տրամադրումը, իսկ թիվ 84-Ա որոշմամբ սահմանված է մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետությունում 2007 թվականին արձանագրված խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերին օժանդակություն ցույց տալու չափը՝ դրամական արտահայտությամբ:

Այսպես՝ ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 31-ի թիվ 82-Ն որոշմամբ հաստատվել է՝

1. անասնահամաճարակների հետևանքով գյուղատնտեսական կենդանիների անկումների և հարկադիր սպանդի դեպքում սեփականատիրոջը ցուցաբերվող օժանդակության կարգը (Հավելված 1) (այսուհետ՝ Կարգ).
2. անասնահամաճարակների հետևանքով գյուղատնտեսական կենդանիների անկումների և հարկադիր սպանդի դեպքում օժանդակության ենթակա սեփականատերերի գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների ցանկը (Հավելված 2) (այսուհետ՝ Ցանկ).
3. անասնահամաճարակների հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված գյուղատնտեսական կենդանիների սեփականատերերին ցուցաբերվող օժանդակության կազմակերպման ազգային հանձնաժողովի կազմը (Հավելված 3)

(այսուհետ՝ Կազմ):

Կարգի 1-ին կետով սահմանվում են անասնահամաճարակների բռնկման պատճառով գյուղատնտեսական կենդանիների անկումների և դրանց տարածման կանխարգելման նպատակով հարկադիր սպանդի ենթարկված անասնազլխաքանակի արժեքի դիմաց սեփականատեր ֆիզիկական և իրավաբանական անձանց ցուցաբերվող օժանդակության հետ կապված հարաբերությունները:

Կարգի 2-րդ կետի համաձայն՝ օժանդակությունը (դրամական կամ այլ տեսքով) ցուցաբերվում է այն անասնահամաճարակների դեպքում, որոնք հանգեցնում են գյուղատնտեսական կենդանիների անխուսափելի անկումների, և դրանց տարածման կանխարգելման առավել արդյունավետ միջոցը վարակված գյուղատնտեսական կենդանիների հարկադիր սպանդն է:

Կարգի 5-րդ կետի համաձայն՝ անասնահամաճարակի հետևանքով անկած կամ հարկադիր սպանդի ենթարկված գյուղատնտեսական կենդանիների սեփականատերերին ցուցաբերվող օժանդակության կազմակերպման համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը ստեղծում է ազգային հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով)՝ գյուղատնտեսության ոլորտի պետական կառավարման լիազորված մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) ներկայացմամբ:

Կարգի 9-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մարզերում գյուղատնտեսական կենդանիների հարկադիր սպանդի գործընթացի կազմակերպման նպատակով Հայաստանի Հանրապետության մարզերում ստեղծվում են մարզային հանձնաժողովներ (այսուհետ՝ մարզային հանձնաժողով):

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ անասնահամաճարակի պատճառով անկած կամ հարկադիր սպանդի ենթարկված գյուղատնտեսական կենդանիների սեփականատերերին օժանդակությունը տրամադրվում է մարզային հանձնաժողովների կողմից կազմված ակտերի հիման վրա: Ակտերը կազմվում են 3 օրինակից:

Կարգի 18-րդ կետի համաձայն՝ գյուղատնտեսական կենդանիների անկումները զրանցելուց կամ հարկադիր սպանդի իրականացնելուց հետո մեկշաբաթյա ժամկետում մարզային հանձնաժողովն ակտերի առաջին օրինակները և ակտերի ամփոփման արդյունքները ներկայացնում է հանձնաժողով:

Կարգի 19-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը երկշաբաթյա ժամկետում քննարկում է մարզային հանձնաժողովների կողմից ներկայացված ակտերը, ընդունում է որոշում գյուղատնտեսական կենդանիների սեփականատերերին ցուցաբերվող օժանդակության ձևի և գումարի չափի վերաբերյալ և լիազոր մարմին ներկայացնում առաջարկություն:

Կարգի 20-րդ կետի համաձայն՝ օժանդակությունը լիազոր մարմնի կողմից տրամադրվում է անմիջապես տուժած սեփականատիրոջը՝ զանձապետական համակարգի միջոցով:

Ցանկով ամրագրված հիվանդությունների շարքում զետեղված է նաև խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդությունը:

Ղատարանը նախ փաստում է, որ հայցվորին պատկանող կենդանիներն անկել են վկայակոչված որոշման Ցանկով ամրագրված հիվանդության բռնկման պատճառով: Հաջորդիվ՝ վկայակոչված նորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ Հայաստանի Հանրապետությունում 2007 թվականին արձանագրված խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերը, այդ թվում՝ հայցվորը, օժանդակություն ստանալու տեսանկյունից պետք է հետամուտ լինեին որոշակի գործողությունների կատարմանը:

Սահմանվորապես, սույն դեպքում հայցվորն օժանդակություն ստանալու համար համապատասխան պետք է դիմեր մարզային հանձնաժողովին՝ այն հաշվառմամբ, որ Հայաստանի Հանրապետության մարզերում բռնկված անասնահամաճարակների դեպքում օժանդակությունը տրամադրվում է մարզային



հանձնաժողովի կողմից կազմված և ազգային հանձնաժողովին ներկայացված ակտերի հիման վրա: Իսկ սույն դեպքում խոսքը վերաբերում է ՀՀ Արարատի մարզում բռնկված հիվանդության պատճառով կենդանիների անկմանը: Ընդ որում՝ հաշվի առնելով, որ մինչև ՀՀ կառավարության թիվ 82-Ն որոշման ընդունումն արդեն իսկ կազմված էր հայցվորին պատկանող կենդանիների հարկադիր սպանդի դիախերծման ակտը, ուստի դատարանի համոզմամբ այն պետք է ներկայացվեր մարզային հանձնաժողովի հաստատմանը, կամ առնվազն հայցվորի դիմումի հիմքով մարզային հանձնաժողովը պետք է արձանագրեր հայցվորին պատկանած կենդանիների հարկադիր անկման փաստը՝ իր կողմից այդ կենդանիների հարկադիր սպանողը կազմակերպված չլինելու պայմաններում (Կարգի 18-րդ կետ):

Մինչդեռ, վկայակոչված գործողությունների կատարման համար համապատասխան մարմնին դիմելու փաստը հիմնավորող որևէ պատշաճ ապացույց հայցվորի կողմից չի ներկայացվել: Ավելին՝ հայցվորի համոզմամբ հիշյալ որոշմամբ ամրագրված կանոնակարգումներն իր նկատմամբ կիրառելի չեն, քանի որ դիախերծման ակտը կազմվել է ավելի վաղ, քան ընդունվել է օժանդակության տրամադրման հարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտը:

Այս կապակցությամբ դատարանն արդեն իսկ սույն դատական ակտում մատնանշել է, որ դիախերծման ակտի կազմման պահին անանահամաձարակի բռնկման հետևանքով կենդանիների անկման դիմաց օժանդակություն տրամադրելու հետ կապված հարաբերություններն իրավական կանոնակարգում չեն ունեցել, հետևապես դիախերծման ակտի կազմման պահին հայցվորն օբյեկտիվորեն չէր կարող համոզմունք ունենալ, որ այդ ակտը և դրա հիման վրա կազմված ամփոփագիրը բավարար հիմք են օժանդակություն ստանալու տեսանկյունից:

Այսպիսով, դատարանը փաստում է, որ հայցվորի կողմից չեն պահպանվել ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 31-ի թիվ 82-Ն որոշմամբ հաստատված Կարգով ամրագրված հայեցակարգերը:

Ինչ վերաբերում է հայցվորի փաստարկին, որ ձևավորված իրավահարաբերությունը կարգավորվում է ՀՀ կառավարության թիվ 84-Ա որոշման շրջանակներում, իսկ դրանով որևէ ընթացակարգ կամ վավերապայման նախատեսված չէ, ապա այն հիմնավոր չէ, քանի որ օժանդակություն ստանալու կամ տրամադրելու հետ կապված կանոնակարգումներն ամրագրվել են թիվ 82-Ն որոշմամբ, իսկ թիվ 84-Ա որոշմամբ սահմանվել է մասնավոր դեպքում՝ Հայաստանի Հանրապետությունում 2007 թվականին արձանագրված խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերին օժանդակություն ցույց տալու նպատակով Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին տրամադրվող գումարի չափը: Ընդ որում՝ թիվ 84-Ա որոշումն ընդունվել է ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 31-ի թիվ 82-Ն որոշման հիմքով:

Ինչ վերաբերում է ՀՀ կառավարության 2007 թվականի սեպտեմբերի 06-ի թիվ 1108-Ն որոշման վկայակոչմամբ հայցվորի փաստարկին, որ դիախերծման ակտը և դրա հիման վրա ամփոփագիրը կազմվել են իրավասու պաշտոնատար անձանց կողմից, ինչը նշանակում է, որ հայցվորի կողմից պահպանվել են անհրաժեշտ ընթացակարգերը, ապա այն նույնպես հիմնավոր չէ, քանի որ հիշյալ որոշմամբ ՀՀ կառավարությունը հաստատել է Հայաստանի Հանրապետությունում խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության վերացման և տարածման կանխարգելման միջոցառումների ծրագիրը, Հայաստանի Հանրապետությունում խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության վերացման և տարածման կանխարգելման միջոցառումների ծրագիրը համակարգող

հանրապետական արտակարգ հակաանաճահամաճարակային հանձնաժողովի կազմը, Հայաստանի Հանրապետությունում խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության վերացման և տարածման կանխարգելման միջոցառումների պլանը: Այսինքն՝ որոշմամբ կանոնակարգվում են խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության վերացման և տարածման կանխարգելման հետ կապված հիմնախնդիրները, որոնք որևէ կերպ չեն կարող վերագրվել արդեն իսկ անկած կամ հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերին օժանդակության տրամադրման հետ կապված իրավահարաբերություններին և դրանց կանոնակարգումներին:

Անդրադառնալով 2007 թվականին արձանագրված խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերի ցուցակից հայցվորին հանելու գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու հանգամանքին՝ դատարանն արձանագրում է հետևյալը:  
Գործի քննությամբ չի հիմնավորվել օժանդակություն ստացողների հաստատված ցուցակում հայցվորի՝ որևէ ժամանակահատվածում ընդգրկված լինելու փաստը:  
Ղատարանն ընդգծում է, որ նշված փաստի ապացուցման պարտականությունը կրում է հայցվոր կողմն այն հաշվառմամբ, որ պահանջում է ոչ իրավաչափ ճանաչել ցուցակից հայցվորին հանելու գործողությունը, ինչը նշանակում է, որ հայցվորն առնվազն պետք է հիմնավորեր, որ օբյեկտիվ իրականության մեջ որևէ ժամանակահատվածում ընդգրկված է եղել օժանդակություն ստացող սեփականատերերի հաստատված ցուցակում, սակայն հանվել է (հիմք՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի): Մինչդեռ, նշված փաստը հիմնավորող որևէ ապացույց հայցվորի կողմից դատարան չի ներկայացվել: Ընդ որում՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածով ամրագրված հայեցակարգի հաշվառմամբ դատարանը պահանջել է ներկայացնելու հիշյալ փաստը հիմնավորող պատշաճ ապացույցներ, մինչդեռ այդպիսիք չեն ներկայացվել: Իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմը:  
Նկատենք՝ դիախերձման ակտը և ամփոփագիրը կազմել են 2007 թվականին, իսկ օժանդակություն ստանալու կամ չստանալու խնդրի պարզման համար հայցվորը դիմել է միայն 2011 թվականին: Ընդ որում՝ որևէ դիմումով հայցվորը չի հայտնել, որ ընդգրկված է եղել օժանդակություն ստացողների համապատասխան ցուցակում, այլև խնդրել է պարզաբանել օժանդակություն ստանալու է, թե՛ ոչ: Հետևապես պետք է եզրահանգել, որ անկախ ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության 2011 թվականի հուլիսի 22-ի գրությամբ ամրագրված փաստարկի բովանդակությունից առ այն, որ. <... 2007 թվականի ընթացքում խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր ոչնչացված կենդանիների սեփականատերերի ցուցակից հանվել են խոշոր տնտեսվարող սուբյեկտ հանդիսացող սեփականատերերի վերաբերյալ տվյալները, որի արդյունքում Գ.Ավվերոյանին օժանդակություն չի տրամադրվել>, օժանդակություն ստացող սեփականատերերի ցուցակում ընդգրկված լինելու փաստի հաստատված չլինելու պայմաններում բացակայում է այդ ցուցակից հայցվորին հանելու որևէ գործողության իրավաչափության գնահատման հնարավորությունը, ըստ այդմ՝ այն իրավաչափ կամ ոչ իրավաչափ որակելու տրամաբանությունը:  
Ինչ վերաբերում է հայցվորի փաստարկին, որ վիճարկվող

գործողությունն այլևս իրավաբանական ուժ չունի, ապա այն հիմնավոր չէ, քանի որ քանի դեռ կարող են պահպանվել այդ գործողության փաստական հետևանքները հայցվորի նկատմամբ, նման գործողությունը պահպանում է իր իրավաբանական ուժը: Ղատարանը փաստում է, որ վկայակոչված հիմնավորումը հնարավոր չի եղել բացահայտել հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծելիս՝ անհրաժեշտ ապացույցների բացակայության պայմաններում:

Նկատի ունենալով, որ դատաքննությամբ չի հիմնավորվել օժանդակություն ստացող սեփականատերերի հաստատված ցուցակում հայցվորի ընդգրկված լինելու փաստը, իսկ սույն դատական ակտում դատարանն ամրագրել է օժանդակություն ստանալու հարաբերությունները կանոնակարգող նորմատիվ իրավական ակտով հաստատված Կարգի պահանջները հայցվորի կողմից պահպանված չլինելու փաստը՝ դատարանը գտնում է, որ սույն դեպքում բացակայում է օժանդակություն ստացող սեփականատերերի ցուցակում հայցվորին վերականգնելուն (ընդգրկելուն) պատասխանողներին պարտավորեցնելու հիմքը: Այսպիսով՝ ամբողջ վերը նշվածի հիման վրա դատարանը գտնում է, որ հայցն անհիմն է և մերժման ենթակա ամբողջությամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի հիմքով քննարկելով դատական ծախսերի փոխհատուցման հարցը, և նկատի ունենալով, որ հայացադիմումի համար հայցվորը վճարել է պետական տուրք, իսկ հայցը մերժվում է՝ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ, 112-115-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132-րդ հոդվածներով, ՀՀ դատական օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ կետով, դատարանը

**Վ Ճ Ռ Ե Ց**

Գեղամ Ալավերդյանի հայցն ընդդեմ ՀՀ գյուղատնտեսության նախարարության, ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության, երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ 2007 թվականին արձանագրված խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերի ցուցակից հայցվորին հանելու ՀՀ գյուղատնտեսության նախարարության գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու և հայցվորին այդ ցուցակում վերականգնելուն պարտավորեցնելու պահանջների մասին, մերժել ամբողջությամբ:

Ղատական ծախսերի հարցը համարել լուծված:

Սույն վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո:

Վճիռը կանոփին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռը կարող է բողոքարկվել վերաքննության կարգով՝ ՀՀ վարչական վերաքննիչ դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ՂԱՏԱՎՈՐ ԿԱՐԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ղատական ակտի ամսաթիվը:  
Ակտով հօգուտ պետ. բյուջեի  
քննազանձման ենթակա պետ. ( ՀՀ  
դրամ):

29-05-2013  
0

<b>Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ:</b>	02-07-2013
<b>Էջերի քանակը:</b>	1-ին հատոր 121 էջ 2-րդ հատոր 69 էջ
<b>Գործին կից նյութեր:</b>	
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ամսաթիվ:</b>	02-07-2013
<b>Էջերի քանակը:</b>	հատոր 1 բաղկացած 121 թերթից, հատոր 2 բաղկացած 69 թերթից
<b>Գործին կից նյութերը:</b>	
<b>Որ դատարան է ուղարկվել:</b>	Վարչական վերաքննիչ
<b>Ուր է ուղարկվել:</b>	
<b>Ելքի գրության համար:</b>	Ե-ՂԴ-9-64660/13
<b>Ամսաթիվ:</b>	04-07-2013
<b>Ամսաթիվ:</b>	07-02-2014
<b>Ամսաթիվ:</b>	07-02-2014
<b>Նախագահող դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Վարչական
Դատավորի անուն:	Արթուր Ծատուրյան
<b>Դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Վարչական
Դատավորի անուն:	
<b>Որոշման ամսաթիվ:</b>	10-02-2014
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	09-04-2014
<b>Ծանուցագիրը ուղարկվել է:</b>	10-02-2014
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ժամ:</b>	12:10
<b>Նիստերի դահլիճի համար:</b>	315
<b>Նշանակվել է:</b>	Նախնական դատական նիստ
<b>Նիստը:</b>	Կայացվել է
<b>Պատճառը:</b>	
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	17-06-2014
<b>Ծանուցագիրը ուղարկվել է:</b>	09-04-2014
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ժամ:</b>	15:30

Նիստերի դահլիճի համար:	315
Նշանակվել է:	Նախնական դատական նիստ
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	

Դատաքննության ամսաթիվ:	16-10-2014
Ծանուցագիրը ուղարկվել է:	17-06-2014
Այլ նշումներ:	
Ժամ:	14:10
Նիստերի դահլիճի համար:	315
Նշանակվել է:	Դատաքննություն
Նիստը:	
Պատճառը:	

**Դատական Գործ N: ՎԴ/4392/05/11**

Ամսաթիվ:	28-06-2013
----------	------------

**Բողոք բերող անձը**

Անուն	Գեղամ
Ազգանուն	Ալավերդյան
Հասցե	ք. Արարատ, ՈԿՖ-ի բան. 102., 67 բն.

**Ներկայացուցիչ**

Անուն	Հայկ
Ազգանուն	Եգանյան
Հասցե	ք.Երևան, Արեւյան 6/1

**Ում կողմից է բերվել բողոքը:** Հայցվորի ներկայացուցիչ

**Պետական տուրք:** 10000

**Պատասխանի ստացման ամսաթիվը:**

**Պատասխան բերող անձը**

Անուն	
Ազգանուն	
Հասցե	

**Բողոքարկվող դատական ակտը:** ըստ հայցի Գեղամ Ալավերդյանի ընդդեմ ՀՀ գյուղատնտեսության նախարարության, ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության, Երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վարչական մարմնի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու և հետևանքներ կիրառելու պահանջի մասին.

**Վ Ճ Ռ Ե Ց**

Գեղամ Ալավերդյանի հայցն ընդդեմ ՀՀ գյուղատնտեսության նախարարության, ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության, Երրորդ

	<p>անծ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ 2007 թվականին արձանագրված խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերի ցուցակից հայցվորին հանելու ՀՀ գյուղատնտեսության նախարարության գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու և հայցվորին այդ ցուցակում վերականգնելուն պարտավորեցնելու պահանջների մասին, մերժել ամբողջությամբ:</p> <p>Ղատական ծախսերի հարցը համարել լուծված:</p> <p>Սույն վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո:</p> <p>Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:</p> <p>Վճիռը կարող է բողոքարկվել վերաքննության կարգով՝ ՀՀ վարչական վերաքննիչ դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:</p>
<b>Գործի համարը:</b>	ԴԱՏԱՎՈՐ ԿԱՐԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎԴ/4392/05/11
<b>Ամսաթիվ:</b>	04-07-2013
<b>Վիճակագրական տողի համարը:</b>	2.1
<b>Գործի համարը:</b>	ՎԴ/4392/05/11
<b>Գործը բաղկացած է (հատոր / էջերի քանակ):</b>	2 հատորից. 1-ին հատորը՝ 121 թերթից, 2-րդ հատորը՝ 69 թերթից
<b>Գործը ստացվել է:</b>	Վարչական
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ամսաթիվ:</b>	04-07-2013
<b>Նախագահող դատավոր</b>	
Ղատարանի անվանում:	Վարչական վերաքննիչ
Ղատավորի անուն:	Արա Բաբայան
<b>Ղատավոր</b>	
Ղատարանի անվանում:	Վարչական վերաքննիչ
Ղատավորի անուն:	Աշոտ Սարգսյան
<b>Ղատավոր</b>	
Ղատարանի անվանում:	Վարչական վերաքննիչ
Ղատավորի անուն:	Հովսեփ Բեդկյան
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Որոշման ամսաթիվ:</b>	11-07-2013
<b>Ժամկետ:</b>	
<b>Որոշման հիմքը</b>	
Հոդված	117-6
<b>Որոշման հիմքը</b>	
Հոդված	112
<b>Որոշման հիմքը</b>	

Որոշման բովանդակություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ  
 գործ թիվ ՎԴ/4392/05/11  
 Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
 ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔԸ ՎԵՐԱԴԱՐՉՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
 «11» հուլիսի 2013թ. ք.Երևան  
 Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ  
 դատարանը, հետևյալ կազմով՝  
 նախագահող դատավոր՝ Արա Բաբայան  
 դատավոր՝ Հովսեփ Բեդկյան  
 դատավոր՝ Աշոտ Սարգսյան  
 քննարկելով ըստ հայցի Գեղամ Ավվերդյանի ընդդեմ ՀՀ  
 գյուղատնտեսության նախարարության, ՀՀ գյուղատնտեսության  
 նախարարության սննդամթերքի անվտանգության պետական  
 ծառայության, երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության  
 վարչական մարմնի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու և  
 հետևանքներ կիրառելու պահանջների մասին թիվ ՎԴ/4392/05/11  
 վարչական գործով Հայաստանի Հանրապետության վարչական  
 դատարանի 29.05.2013թ. վճռի դեմ հայցվոր Գեղամ Ավվերդյանի  
 (ներկայացուցիչ՝ Հ.Եգանյան) կողմից բերված վերաքննիչ բողոքը  
 վարույթ ընդունելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ վարչական դատարանը (դատավոր՝ Կ.Ավետիսյան) թիվ  
 ՎԴ/4392/05/11 վարչական գործով 29.05.2013թ. կայացրած վճռով  
 հայցվոր Գեղամ Ավվերդյանի հայցն ամբողջությամբ մերժել է:  
 Թիվ ՎԴ/4392/05/11 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի  
 29.05.2013թ. վճռի դեմ հայցվոր Գեղամ Ավվերդյանի  
 (ներկայացուցիչ՝ Հ.Եգանյան) կողմից բերվել է վերաքննիչ բողոք,  
 որով ներկայացվել է պահանջ վարչական դատարանի դատական  
 ակտը բեկանելու և փոփոխելու՝ հայցը բավարարելու մասին:  
 Ուսումնասիրելով ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ  
 վարչական վերաքննիչ դատարանը գտնում է, որ բողոքը պետք  
 վերադարձնել, հետևյալ պատճառաբանությամբ.  
 ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.4-րդ հոդվածի 4-րդ  
 մասի համաձայն՝ բողոքին կցվում են պետական տուրքը վճարելու,  
 բողոքի պատճենները՝ դատական ակտ կայացրած դատարանին և  
 գործին մասնակցող այլ անձանց ուղարկելու մասին ապացույցները:  
 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի  
 վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը  
 նվազեցնելու հնարավորություն, ապա վերաքննիչ բողոքին կցվում է  
 կամ բողոքում ներառվում է դրա վերաբերյալ միջնորդությունը:  
 ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.6-րդ հոդվածի 1-ին  
 մասի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձվում է,  
 եթե չեն պահպանվել սույն օրենսգրքի 117.4-րդ հոդվածի  
 պահանջները:  
 Ներկայացված վերաքննիչ բողոքին կից, որպես վերաքննիչ բողոքը  
 ներկայացնելու համար սահմանված չափով պետական տուրքի  
 վճարումը հավաստող ապացույց, ներկայացվել է 10000 ՀՀ դրամ  
 պետական տուրք վճարելու վերաբերյալ 28.06.2013թ. կազմված թիվ  
 275 ա մուտքի դրամարկղային օրդերը:  
 «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության  
 օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն դատարանի  
 դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոքների համար ոչ գույքային  
 բնույթի պահանջի գործերով վճարվում է պետական տուրք բազային  
 տուրքի (1000 ՀՀ դրամ) տասնապատիկի չափով:  
 Տվյալ դեպքում, վարչական գործը քննվել և վճիռը կայացվել է 2007  
 թվականին արձանագրված խոզերի աֆրիկական ժանտախտ  
 հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի

ենթարկված կենդանիների ցուցակից հայցվորին հանելու ՀՀ գյուղատնտեսության նախարարության գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու և հայցվորին այդ ցուցակում վերականգնելուն պարտավորեցնելու երկու ոչ գույքային պահանջների շրջանակներում, որպիսի պայմաններում վերաքննիչ բողոք բերելու համար պետք է վճարվի պետական տուրք 20000 ՀՀ դրամի չափով, մինչդեռ բողոքին կից ներկայացված մուտքի դրամարկղային թիվ 275 ա օրդերի համաձայն բողոքաբերի կողմից բողոք բերելու համար որպես պետական տուրք վճարվել է 20000 ՀՀ դրամ, որպիսի պայմաններում բողոքին կից ներկայացված պետական տուրքի վճարման մասին նշված փաստաթուղթը, չի կարող դիտվել որպես սահմանված չափով պետական տուրքի վճարումը հավաստող ապացույց, այսինքն բողոքում չեն պահպանվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.4-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները, ինչը հիմք է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն բողոքը վերադարձնելու համար:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն նույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ կամ 3-րդ կետերով նախատեսված հիմքերով վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո բողոքում թույլ տրված խախտումները վերացվելու և որոշումն ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում, կրկին ներկայացվելու դեպքում բողոքը համարվում է դատարանում ընդունված սկզբնական ներկայացման օրը: Բողոքը կրկին ներկայացվելու դեպքում խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրվում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.6-րդ, 112-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածով, ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

Ըստ հայցի Գեղամ Ալավերդյանի ընդդեմ ՀՀ գյուղատնտեսության նախարարության, ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության, Երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության՝ վարչական մարմնի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու և հետևանքներ կիրառելու պահանջների մասին թիվ ՎԴ/4392/05/11 վարչական գործով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 29.05.2013թ. վճռի դեմ հայցվոր Գեղամ Ալավերդյանի (ներկայացուցիչ՝ Հ.Եգանյան) կողմից բերված վերաքննիչ բողոքը՝ վերադարձնել:

Պարզաբանել, որ վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո բողոքում թույլ տրված խախտումները վերացվելու և որոշումն ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում, կրկին ներկայացվելու դեպքում բողոքը համարվում է դատարանում ընդունված սկզբնական ներկայացման օրը:

Որոշումը կարող է վճռաբեկության կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան, այն ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱԿՈՐ ԴԱՏԱԿՈՐ ԴԱՏԱԿՈՐ  
Ա. ԲԱԲԱՅԱՆ Հ. ԲԵՂԵԿՅԱՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Այլ նշումներ:

Բողոքի ստացման ամսաթիվը: 23-07-2013

Երբ: 29-07-2013



Որոշումը ուղարկվել է կողմերին:	29-07-2013
Ուղարկվել է հուշաթերթիկ/որոշումը:	29-07-2013
Այլ նշումներ:	
<b>Ամսաթիվ:</b>	13-11-2013
Ծանուցագիրը ուղարկվել է:	29-07-2013
Ժամ:	11:20
Նիստերի դահլիճի համարը:	11
Այլ:	
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
<b>Ամսաթիվ:</b>	04-12-2013
Ծանուցագիրը ուղարկվել է:	
Ժամ:	16:03
Նիստերի դահլիճի համարը:	11
Այլ:	Հրապարակում
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
<b>Ամսաթիվ:</b>	04-12-2013
Մասնակի բեկանվել է դատական ակտը:	Բեկանված մասով գործն ուղարկվել է ստորադաս դատարան նոր քննության
Այլ նշումներ:	
<b>Դատական ակտ:</b>	<p>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ</p> <p>Հայաստանի Հանրապետության Վարչական գործ թիվ ՎԴ/4392/05/11 վարչական դատարանի վճիռ Գործ թիվ ՎԴ/4392/05/11 Նախագահող դատավոր՝ Կ.Ավետիսյան</p> <p>Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «04» դեկտեմբերի 2013թ. ք.Երևան Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանը (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան), հետևյալ կազմով՝ նախագահող դատավոր՝ Արա Բաբայան դատավոր՝ Հովսեփ Բեդկյան դատավոր՝ Աշոտ Սարգսյան Մասնակցությամբ՝ հայցվոր ներկայացուցիչ՝ Հ.Եզանյանի երրորդ անձի ներկայացուցիչ՝ Տ.Նահապետյանի դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի Գեղամ Ալավերդյանի ընդդեմ ՀՀ գյուղատնտեսության նախարարության, ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության, երրորդ անձ ՀՀ</p>

Ֆինանսների նախարարության՝ վարչական մարմնի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու և հետևանքներ կիրառելու պահանջների մասին թիվ ՎԴ/4392/05/11 վարչական գործով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 29.05.2013թ. վճռի դեմ հայցվոր Գեղամ Ալավերդյանի (ներկայացուցիչ՝ Հայկ Եգանյան) կողմից բերված վերաքննիչ բողոքը,

#### Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

Գեղամ Ալավերդյանը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ գյուղատնտեսության նախարարության՝ խնդրելով ոչ իրավաչափ ճանաչել 2007 թվականին արձանագրված՝ խոզերի աֆրիկյան ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերի ցուցակից հայցվորին հանելու՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության գործողությունը և պարտավորեցնել ընդունելու բարենպաստ վարչական ակտ իրեն այդ ցուցակում ընդգրկելու մասին, որպիսի հայցադիմումը ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ.Ավետիսյան) /այսուհետ նաև՝ Դատարան/ 17.10.2011թ. որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատարանի 07.03.2012թ. և 29.06.2012թ. որոշումներով գործով որպես երրորդ անձ և երկրորդ պատասխանող ներգրավվել են համապատասխանաբար՝ ՀՀ ֆինանսների նախարարությունն ու ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը:

Դատարանը թիվ ՎԴ/4392/05/11 վարչական գործով 29.05.2013թ. կայացրած վճռով հայցվոր Գեղամ Ալավերդյանի հայցն ամբողջությամբ մերժել է:

Թիվ ՎԴ/4392/05/11 վարչական գործով Դատարանի 29.05.2013թ. վճռի դեմ հայցվոր Գեղամ Ալավերդյանի (ներկայացուցիչ՝ Հայկ Եգանյան) կողմից բերվել է վերաքննիչ բողոք:

Վերաքննիչ դատարանի 11.07.2013թ. որոշմամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով ներկայացված վերաքննիչ բողոքը վերադարձվել է: Վերաքննիչ դատարանի 11.07.2013թ. վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումն ստանալուց հետո 15-օրյա ժամկետում բողոքում թույլ տրված խախտումները վերացնելով՝ բողոքը կրկին ներկայացվել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարան: Վերաքննիչ դատարանի 29.07.2013թ. որոշմամբ բողոքն ընդունվել է վարույթ:

Երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոքի պատասխան:

Դատաքննությունը հայտարարվել է ավարտված 13.11.2013թ. և դատական ակտի հրապարակման օր է նշանակվել 04.12.2013թ.:

Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը. բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը չի կիրառել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը, 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը, սխալ է մեկնաբանել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 3-րդ մասը, կիրառել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ և 26-րդ հոդվածների 1-ին մասերը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը, որոնք չպետք է կիրառեր:

Դատարանը սխալ է ընտրել ապացուցման ենթակա փաստական հանգամանքը և ապացուցման ոչ իրավաչափ պարտականություն է սահմանել հայցվոր կողմից համար:

Դատարանը թեև հաստատված է համարել, որ հայցվորին

պատկանող կենդանիներն անկել են 2007թ. արձանագրված՝ խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության պատճառով, սակայն արձանագրել է, թե իբր գործի քննությամբ չի հիմնավորվել օժանդակություն ստացողների հաստատված ցուցակում հայցվորի՝ որևէ ժամանակահատվածում ընդգրկված լինելու փաստը, որի ապացուցման պարտականությունը դրել է հայցվորի վրա:

Գտնում են, որ Ղատարանը չէր կարող ապացուցման ենթակա փաստ դիտարկել հիշատակված ցուցակում հայցվորի որևէ ժամանակահատվածում ընդգրկված լինելու հանգամանքը, քանի որ դա հաստատված է գործում առկա մի շարք ապացույցներով և այդ հանգամանքը գործի մասնակիցների կողմից չի վիճարկվել:

Մասնավորապես, գործում առկա 27.11.2007թ. կազմված թիվ 32 դիախերձման ակտի վերևի ձախ անկյունային հատվածում առկա է նշում այն մասին, որ ակտի օրինակները տրամադրվել են ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Լ.Ռուխիկյանին և ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական պետական տեսչության պետ Գ.Բաղիյանին, իսկ ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 22.07.2011թ. թիվ 348 գրությամբ հաստատվում է, որ 2007 թվականին արձանագրված խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանողի ենթարկված կենդանիների սեփականատերերի ցուցակից հանվել է հայցվոր Գ.Ալավերդյանը:

Վերոգրյալից հետևում է, որ իրավասու պետական մարմիններն իրազեկված են եղել Գ.Ալավերդյանին պատկանող կենդանիների հարկադիր սպանողի ենթարկելու մասին, Գեղամ Ալավերդյանին ընդգրկել են օժանդակություն ստացողների ցուցակում, սակայն որոշ ժամանակ անց հանել են այդ ցուցակից: Այսինքն, ակնհայտ է և ապացուցման ենթակա չէ այն փաստը, որ հայցվոր Գեղամ Ալավերդյանն ընդգրկված է եղել օժանդակություն ստացողների ցուցակում:

Գտնում են, որ Ղատարանն ապացուցման ենթակա փաստերի ընտրության հարցում թույլ է տվել խախտում: Գործի փաստերի համադրմամբ ակնհայտ է, որ գործի ճիշտ լուծման համար էական նշանակաթյուն ունի ոչ թե հայցվորի՝ որևէ ժամանակահատվածում ցուցակում ընդգրկված լինելու փաստը, ինչը հիմնավորված է վերոհիշյալ ապացույցներով, այլ ցուցակից հայցվորին հանելու վարչական մարմնի գործողության իրավաչափությունը, ինչն ապացուցելու պարտականությունը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի ուժով դրված է վարչական մարմնի վրա, իսկ ՀՀ վարչական դատարանի օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական մարմնի գործողության վիճարկման պայմաններում այդ գործողության համար հիմք ծառայած փաստական հանգամանքների ապացուցման բեռը դրվում է վարչական մարմնի վրա:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:

Այն, որ Գեղամ Ալավերդյանին օժանդակություն տրամադրելու մասին իրազեկված են եղել իրավասու պետական մարմինները և Գեղամ Ալավերդյանն ընդգրկված է եղել օժանդակություն ստացողների ցուցակում, ապացուցվում է գործում առկա՝ 27.11.2007թ. կազմված թիվ 32 դիախերձման ակտով և ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 22.07.2011թ. թիվ 348 գրությամբ: Հետևաբար, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի

ապացուցել Չեղամ Ալավերդյանի ներկայացրած տվյալները, տեղեկությունները Ղատարանը պետք է համարեր հավաստի: Ընդ որում, կողմերը երբևէ չեն վիճարկել հիշատակված ցուցակում հայցվորի որևէ ժամանակահատվածում ընդգրկված լինելու փաստը: Իսկ այն հանգամանքը, թե որն է եղել հայցվորին ցուցակից հանելու գործողության իրավաչափությունը, վարչական մարմինը Ղատարանին հիմնավորող ապացույց չի ներկայացրել: Ավելին, Ղատարանը, իրացնելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածով («ex officio») վերապահված լիազորությունները՝ 08.11.2012թ.-ին նշանակված նախնական դատական միստին ՀՀ ՉՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության ներկայացուցչին հանձնարարել է ներկայացնել վարչական վարույթի նյութերը:

Այսինքն, Ղատարանը վերը նշված հանձնարարությամբ նույնպես ապացույցների բեռի բաշխման կանոնին համապատասխան գտել է, որ ծառայությունը պետք է ապացուցի վիճարկվող գործողությունների իրավաչափությունը և հիշատակված փաստի ապացուցման բեռը դրել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության վրա: Վարչական վարույթի նյութերը և հայցի կապակցությամբ դիրքորոշում ներկայացնելու համար նախնական դատական միստը հետաձգվել է և նշանակվել 26.03.2013թ.-ին, ժամը 15:30-ին: Նշանակված նախնական դատական միստին և հաջորդող 27.05.2013թ. միստին ՀՀ ՉՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության ներկայացուցչին չի ներկայացել, ինչպես նաև չեն ներկայացվել պահանջված նյութերը: Հետևաբար, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 4-րդ մասից ելնելով՝ Ղատարանը պարտավոր էր ծառայության կողմից վարչական վարույթի նյութերը չներկայացնելը դիտարկել ապացույցներ ներկայացնելուն ուղղված խոչընդոտ, պետք է այդ անգործությունը մեկնաբաներ ի վնաս վարչական մարմնի և վերջինիս կողմից հակառակ փաստը չապացուցելու պայմաններում հաստատված համարեր, որ այն բացակայում է, իսկ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 22.07.2011թ.-ի թիվ 348 գրության հիմքով պետք է ապացուցված համարեր, որ Գ.Ալավերդյանն ընդգրկված է եղել 2007 թվականին արձանագրված խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների համար օժանդակություն ստանալու իրավունք ունեցող սեփականատերերի ցուցակում, իսկ այդ ցուցակից նրան հանելու գործողությունը պետք է գնահատեր ոչ իրավաչափ, ինչը Ղատարանը չի կատարել և կայացրել գործի նյութերից ու հանգամանքներից չբխող անհիմն վճիռ:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրել է բեկանել Ղատարանի թիվ ՎԴ/4392/05/11 վարչական գործով 29.05.2013թ.-ին կայացված վճիռը և այն փոփոխել՝ հայցը բավարարել:

Վերաքննիչ բողոքի պատասխանում ներկայացվել է հետևյալ դիրքորոշումը.

«Անասնահամաճարակների հետևանքով գյուղատնտեսական կենդանիների անկումների և հարկադիր սպանդի դեպքում սեփականատիրոջը ցուցաբերվող օժանդակության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 31.01.2008 թվականի թիվ 82-Ն որոշմամբ սահմանվում է Հայաստանի Հանրապետությունում անասնահամաճարակների բռնկման պատճառով գյուղատնտեսական կենդանիների անկումների և դրանց տարածման կանխարգելման նպատակով հարկադիր սպանդի ենթարկված անասնազխաքանակի արժեքի դիմաց սեփականատերեր ֆիզիկական և իրավաբանական անձանց օժանդակություն ցույց տալու կարգը, համապատասխան

ընթացակարգերը, լիազոր մարմինը և մեխանիզմները, որոնց հիման վրա իրականացվում է օժանդակության տրամադրումը:  
Ըստ վերոնշյալ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված ընթացակարգի՝ Հայաստանի Հանրապետությունում 2007 թվականին արձանագրված խոզերի աֆրիկյան ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերը, այդ թվում՝ հայցվորը, օժանդակություն ստանալու նպատակով պետք է հետամուտ լինեն օրենսդրությամբ սահմանված որոշակի գործողությունների կատարմանը: Մասնավորապես, սույն դեպքում հայցվորն օժանդակություն ստանալու համար պետք է դիմեր մարզային հանձնաժողովին՝ այն փաստը հաշվի առնելով, որ համաձայն ՀՀ կառավարության 31.01.2008 թվականի 82-Ն որոշման՝ ՀՀ մարզերում բռնկված անասնահամաճարակների դեպքում օժանդակությունը տրամադրվում է մարզային հանձնաժողովի կողմից կազմված և ազգային հանձնաժողովին ներկայացված ակտերի հիման վրա: Ընդ որում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ մինչև վերոնշյալ որոշման ընդունումն արդեն իսկ կազմված էր հայցվորին պատկանող կենդանիների հարկադիր սպանդի դիախերձման ակտը, ուստի օրենսդրության պահանջները պահպանելու նպատակով այն պետք է ներկայացվեր մարզային հանձնաժողովի հաստատմանը: Մինչդեռ, վկայակոչված ընթացակարգերը պահպանելու փաստը հիմնավորող որևէ ապացույց հայցվորի կողմից չի ներկայացվել գործի քննության ընթացքում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիախերձման ակտի կազմման պահին անասնահամաճարակի բռնկման հետևանքով կենդանիների անկման դիմաց օժանդակություն տրամադրելու հետ կապված հարաբերություններն իրավական կանոնակարգում չեն ունեցել և քանի դեռ համապատասխան հարաբերություններն իրավական կարգավորում չէին ստացել, հայցվորն օբյեկտիվորեն չէր կարող ենթադրել օժանդակություն ստանալու հանգամանքը և, հետևաբար, չէր կարող համոզմունք ունենալ, որ իր մոտ առկա փաստաթղթերը բավարար են համապատասխան օժանդակությունը ստանալու տեսակետից, իսկ արդեն համապատասխան

իրավահարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտի ուժի մեջ մտնելուց հետո հայցվորը հանձն չի արել օրենսդրությամբ սահմանված ընթացակարգին համապատասխան գործողությունների կատարումը՝ անասնահամաճարակի հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների համար օժանդակություն ստանալու համար:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝ ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում, բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Վերոնշյալ իրավադրույթն ապացուցման պարտականության բաշխում է կատարում ելնելով այն հանգամանքից, թե արդյոք ապացուցման ենթակա հանգամանքն անձի կամ վարչական մարմնի համար բարենպաստ հետևանքներ ունենալու է, թե ոչ: Ըստ այդմ, ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ վերջինիս համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում, և վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի վերլուծությամբ պարզ է դառնում, որ օրենսդրական նման կարգավորումը նկատի է առնում, որ անձի համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայությունը հնարավոր չէ վերապահել վարչական մարմնին, քանի որ, որպես կանոն, շահագրգիռ անձն է

տեղյակ իր համար բերենապաստ փաստական հանգանաքների առկայությունը և նա է տիրապետում այդ հանգանաքներն ապացուցող տվյալների:

Քանի որ օժանդակություն ստացողների ցուցակում որևէ ժամանակահատվածում ընդգրկված լինելու հանգանաքը հայցվորի համար հանդիսանում է բարենապաստ հետևանքներ առաջացնող հանգանաք, ուստի, վերոգրյալից բխում է, որ օժանդակություն ստացողների ցուցակում որևէ ժամանակահատվածում ընդգրկված լինելու հանգանաքի ապացուցման պարտականությունը կրում է հայցվորը:

Համաձայն ՀՀ վարչական դատավարության 25-րդ հոդվածի 1-ին մասի՝ կողմը պարտավորվում է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում գտնվող այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները: Համաձայն նույն օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմը: Համաձայն նույն հոդվածի 2-րդ մասի՝ ապացուցան բեռը կրում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասով ապացույցներ ներկայացնելու պարտականություն կրող կողմը:

Գործի քննության ընթացքում որևէ կերպ չի հիմնավորվել օժանդակություն ստացողների հաստատված ցուցակում հայցվորի՝ որևէ ժամանակահատվածում ընդգրկված լինելու փաստը, ինչը և արդարացիորեն արձանագրվել է Դատարանի կողմից:

Հետևապես, օժանդակություն ստացողների ցուցակում ընդգրկված լինելու փաստի հաստատված չլինելու պայմաններում, բացակայում է այդ ցուցակից հայցվորին հանելու որևէ գործողության իրավաչափության գնահատման հնարավորությունը, ըստ այդմ՝ այն իրավաչափ կամ ոչ իրավաչափ որակելու տրամաբանությունը: Գործի քննության ընթացքում չի հիմնավորվել օժանդակություն ստացող սեփականատերերի ցուցակում հայցվորի ընդգրկված լինելու փաստը, այլ պարզվել է, որ օժանդակություն ստանալու ցուցակում ընդգրկվելու համար օրենսդրությամբ սահմանված կարգի պահանջներն ակնհայտորեն չեն պահպանվել հայցվորի կողմից, ուստի, իրավացիորեն բացակայում է օժանդակություն ստացող սեփականատերերի ցուցակում հայցվորին վերականգնելու՝ պատասխանողներին պարտավորեցնելու հիմքը: Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում են, որ Դատարանը վճիռ կայացնելիս չի խախտել նյութական կամ դատավարական իրավունքի որևէ նորմ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ խնդրել են Գեղամ Ավավերյանի վերաքննիչ բողոքը մերժել, թիվ ՎԴ/4392/05/11 վարչական գործով Դատարանի 29.05.2013 թվականի վճիռը թողնել անփոփոխ: Վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

1. ՀՀ Արարատի մարզի Ռանչպար համայնքում բռնկված խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության պատճառով անկել են Գեղամ Ավավերյանին պատկանող կենդանիները, ինչի վերաբերյալ 2007 թվականի նոյեմբերի 27-ին կազմվել է թիվ 32 դիախերձման ակտը: Նշված ակտում նշվել է, որ կենդանիները ենթարկվել են հարկադիր սպանդի:

2. Նույն ակտի հիման վրա կազմվել է նաև համապատասխան ամփոփագիր, որը ստորագրվել է Ռանչպար համայնքի ղեկավարի, նրա տեղակալի, համայնքի անասնաբույժի և ավագանու անդամի կողմից:

Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վերաքննիչ բողոքը դրանում նշված պահանջի սահմաններում՝ Վերաքննիչ դատարանը եկավ եզրակացության, որ բողոքը ենթակա է բավարարման մասնակի, հետևյալ

պատճառաբանությամբ.

<< վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

<< վարչական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաբերելի է այն ապացույցը, որն ավելի կամ պակաս հավանական է դարձնում վեճը լուծելու համար էական նշանակություն ունեցող որևէ փաստի գոյությունը, քան այն կլիներ առանց այդ ապացույցի: Ոչ վերաբերելի ապացույցն անթույլատրելի է: Վերաբերելի ապացույցը թույլատրելի է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

<< վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը վճռի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

<< վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս գնահատում է ապացույցները, որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել, և որոնք չեն պարզվել, որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը, որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը: Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ դատարանը գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր վերաբերելի և թույլատրելի ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Տվյալ դեպքում, ներկայացված հայցով Գեղամ Ալավերդյանը Ղատարանին խնդրել է ոչ իրավաչափ ճանաչել 2007 թվականին արձանագրված՝ խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերի ցուցակից իրեն հանելու գործողությունները և պարտավորեցնել ընդունելու բարենպաստ վարչական ակտ իրեն այդ ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Վերաքննիչ դատարանը գտնում է, որ սույն վեճի լուծման համար կարևորագույն նշանակություն ունի այն հանգամանքի պարզումը, թե Գեղամ Ալավերդյանն ընդգրկված եղել է արդյոք 2007 թվականին արձանագրված՝ խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերի կազմում (ցուցակում), թե ոչ, ընդ որում, նշված հանգամանքի պարզումը կարևորագույն նշանակություն ունի թե Գեղամ Ալավերդյանին 2007 թվականին արձանագրված՝ խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերի կազմից (ցուցակից) հանելու գործողություններն ոչ իրավաչափ ճանաչելու, թե 2007 թվականին արձանագրված՝ խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերի կազմում (ցուցակում) Գեղամ Ալավերդյանին ընդգրկելուն պարտավորեցնելու պահանջներով վեճի լուծման համար:

<< վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում գտնվող այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները

կամ առարկությունները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ապացուցման բեռը կրում է սույն օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասով ապացույցներ ներկայացնելու

պարտականություն կրող կողմը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը (պաշտոնատար անձը), որն ընդունել է վիճարկվող իրավական ակտը կամ կատարել է վիճարկվող գործողությունը կամ չի կատարել որևէ հայցվող գործողություն, սակայն հայցվորի պնդմամբ պարտավոր էր այն կատարել, կրում է իր որոշման, գործողության կամ անգործության համար հիմք ծառայած փաստական հանգամանքների ապացուցման բեռը:

Նշված նորմերի իրավակարգավորման պայմաններում, նկատի ունենալով, որ հայցվորի կողմից ներկայացվել է պահանջ 2007 թվականին արձանագրված՝ խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերի կազմից (ցուցակից) իրեն հանելու գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու մասին՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ 2007 թվականին արձանագրված՝ խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերի կազմում (ցուցակում) ընդգրկված լինելու փաստի ապացուցման բեռը կրում է հայցվոր Գեղամ Ալավերդյանը, իսկ նշված ցուցակից հանելու գործողության համար հիմք ծառայած փաստական հանգամանքների ապացուցման բեռը կրում են պատասխանող վարչական մարմինները:

Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարում Ղատարանի պատճառաբանություններն առ այն, որ օժանդակություն ստացողների հաստատված ցուցակում հայցվորի՝ որևէ ժամանակահատվածում ընդգրկված լինելու փաստի ապացուցման պարտականությունը կրում է Գեղամ Ալավերդյանն այն հաշվառմամբ, որ պահանջում է ոչ իրավաչափ ճանաչել ցուցակից իրեն հանելու՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության գործողությունը, ինչը նշանակում է, որ հայցվորն առնվազն պետք է հիմնավորի, որ օբյեկտիվ իրականության մեջ որևէ ժամանակահատվածում ընդգրկված է եղել օժանդակություն ստացող սեփականատերերի հաստատված ցուցակում, սակայն հանվել է:

Վերոգրյալի համատեքստում Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ սույն գործում բացակայում է որևէ ապացույց այն մասին, որ հայցվոր Գեղամ Ալավերդյանն ընդգրկված է եղել 2007 թվականին արձանագրված՝ խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերի կազմում (ցուցակում), և փաստում, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 22.07.2011թ. թիվ 348 գրության մեջ տեղ գտած այն միտքը, որ ՀՀ կառավարության 07.02.2008թ. նիստի թիվ 5 արձանագրության 32-րդ հարցի 2-րդ կետի 1-ին ենթակետով 2007 թվականի ընթացքում խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերի ցուցակից հանվել են խոշոր տնտեսավարող սուբյեկտ հանդիսացող սեփականատերերի վերաբերյալ տվյալները, որի արդյունքում Գ. Ալավերդյանին օժանդակություն չի տրամադրվել, ինքնին բավարար ապացույց չի կարող հանդիսանալ վերջինիս՝ նշված ցուցակում ընդգրկված լինելու փաստը հաստատված համարելու համար:

ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 31-ի թիվ 82-Ն որոշմամբ հաստատվել է անասնահամաճարակների հետևանքով գյուղատնտեսական կենդանիների անկումների և հարկադիր սպանդի դեպքում սեփականատիրոջը ցուցաբերվող



օժանդակության կարգը (այսուհետ՝ Կարգ), ինչպես նաև անասնահամաճարակների հետևանքով անկած կամ հարկադիր սպանդի ենթարկված գյուղատնտեսական կենդանիների սեփականատերերին ցուցաբերվող օժանդակության կազմակերպման ազգային հանձնաժողովի կազմը:

Կարգի 5-րդ կետի համաձայն՝ անասնահամաճարակի հետևանքով անկած կամ հարկադիր սպանդի ենթարկված գյուղատնտեսական կենդանիների սեփականատերերին ցուցաբերվող օժանդակության կազմակերպման համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը ստեղծում է ազգային հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով)՝ գյուղատնտեսության ոլորտի պետական կառավարման լիազորված մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) ներկայացմամբ:

Կարգի 9-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մարզերում գյուղատնտեսական կենդանիների հարկադիր սպանդի գործընթացի կազմակերպման նպատակով Հայաստանի Հանրապետության մարզերում ստեղծվում են մարզային հանձնաժողովներ (այսուհետ՝ մարզային հանձնաժողով):

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ անասնահամաճարակի պատճառով անկած կամ հարկադիր սպանդի ենթարկված գյուղատնտեսական կենդանիների սեփականատերերին օժանդակությունը տրամադրվում է մարզային հանձնաժողովների կողմից կազմված ակտերի հիման վրա: Ակտերը կազմվում են 3 օրինակից:

Կարգի 18-րդ կետի համաձայն՝ գյուղատնտեսական կենդանիների անկումները գրանցելուց կամ հարկադիր սպանդն իրականացնելուց հետո մեկշաբաթյա ժամկետում մարզային հանձնաժողովն ակտերի առաջին օրինակները և ակտերի ամփոփման արդյունքները ներկայացնում է հանձնաժողով:

Կարգի 19-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը երկշաբաթյա ժամկետում քննարկում է մարզային հանձնաժողովների կողմից ներկայացված ակտերը, ընդունում է որոշում գյուղատնտեսական կենդանիների սեփականատերերին ցուցաբերվող օժանդակության ձևի և գումարի չափի վերաբերյալ և լիազոր մարմին ներկայացնում առաջարկություն:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի փաստերը վարչական դատարանը պարզում է ի պաշտոնե («ex officio»):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը մատնանշում է այն փաստերը, որոնք իր կարծիքով էական են վեճի լուծման համար և անհրաժեշտության դեպքում կողմերից պահանջում է ներկայացնել այդ փաստերի ապացույցներ, իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը վեճի լուծման համար անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով իրավասու է, չսահմանափակվելով վարչական դատավարության մասնակիցների միջնորդություններով, նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով, ձեռնարկելու ողջամիտ միջոցներ, մասնավորապես պահանջելու ապացույցներ, լրացուցիչ բացատրություններ, հանձնարարելու կողմերին անձամբ ներկայանալ դատական նիստի:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի ուժով վարչական դատարանի կողմից գործի փաստերի ի պաշտոնե պարզման դատավարական իրավունքին:

Սասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված՝ վեճի լուծման համար էական փաստերը մատնանշելու և դրանց վերաբերյալ ապացույցներ պահանջելու, անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով ողջամիտ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ դատավարական գործողությունների իրականացումը թեև դատարանի իրավունքն է, սակայն դատարանի այդ իրավունքը սահմանափակված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածով սահմանված

բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված պատճառաբանված ներքին համոզման հանգելու դատարանի պարտականությամբ և պետք է բխի արդարության բոլոր պահանջների պահպանման սահմանադրական հիմնադրույթից: Միևնույն ժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործի փաստերն ի պաշտոնե պարզելու գործընթացում դատարանի կողմից ողջամիտ միջոցների ձեռնարկումը չի կարող կրել ձևական բնույթ, այլ նման միջոցների ձեռնարկման դեպքում դատարանը պարտավոր է դրանց կատարման նկատմամբ լինել հետևողական: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է նաև ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում գտնվող այն բոլոր ապացույցները, որոնք հիմնավորում են հակառակ կողմի պահանջները կամ առարկությունները: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի ուժով վարչական դատարանի կողմից գործի փաստերի ի պաշտոնե պարզման դատավարական իրավունքն իրականում ենթադրում է, որ վարչական դատավարության կարգով գործեր քննող դատարանը, գործելով ի պաշտոնե («ex officio»), ունի էական ինքնուրույնություն դատավարության կողմերից: Դատարանի նման դերն իր արտացոլումն է գտել նաև ապացուցման բեռի բաշխման կանոններում, քանի որ ինչպես բխում է վերոգրյալ բեռի կանոնակարգումից վարչական դատավարությունում չի կարող լինել ապացուցման սուբյեկտիվ պարտականություն, ապացուցման համար պատասխանատու է դատարանը, այլ ոչ թե կողմերը: Տվյալ դեպքում, Վերաքննիչ դատարանը փաստում է, որ Դատարանն օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտելու և վեճն ըստ էության ճիշտ լուծելու նպատակով պարտավոր էր, չբավարարվելով կողմերի կողմից ներկայացված ապացույցներով կամ նման ապացույցներ չներկայացնելու փաստն արձանագրելով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածով ի պաշտոնե ողջամիտ միջոցներ ձեռնարկել՝ պարզելու գործում առկա՝ 27.11.2007թ. թիվ 32 դիախերծման ակտի և ՀՀ Արարատի մարզի Ռանչպար համայնքում 2007թ. նոյեմբեր ամսին արձանագրված՝ խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր ոչնչացված կենդանիների վերաբերյալ կազմված ամփոփագրի հետագա ընթացքը և ըստ դրա պարզելու, թե արդյոք Գեղամ Ալավերդյանը 2007 թվականին արձանագրված՝ խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանողի ենթարկված կենդանիների սեփականատերերի կազմում (ցուցակում) ընդգրկված եղել է, թե ոչ, մասնավորապես՝ այդ նպատակով համապատասխան տեղեղեկություններ և փաստաթղթեր պահանջելու համար դիմեր անասնահամաճարակի հետևանքով անկած կամ հարկադիր սպանողի ենթարկված գյուղատնտեսական կենդանիների սեփականատերերին ցուցաբերվող օժանդակության կազմակերպման համար ՀՀ կառավարության կողմից ստեղծված ազգային հանձնաժողովին, ՀՀ Արարատի մարզում ստեղծված մարզային հանձնաժողովին, պահանջեր պատասխանողներից 2007 թվականին արձանագրված՝ խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանողի ենթարկված կենդանիների համար օժանդակություն ստացողների վերաբերյալ առկա վարչական վարույթի նյութերը: Միևնույն ժամանակ, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Դատարանը, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածով, 21.02.2013թ. դատական նիստում կայացրած արձանագրային որոշմամբ ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությանը հանձնարարել է Դատարանին ներկայացնել վարչական վարույթի նյութերը, սակայն, նշված որոշման կատարման նկատմամբ հետևողական չի գտնվել, մասնավորապես՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի

անվտանգության պետական ծառայության որևէ ներկայացուցիչ նշված որոշումը կայացնելուց հետո գործի քննությանը չի մասնակցել, և հիշատակված վարչական վարույթի նյութերը Ղատարանին չեն ներկայացվել, որի հետագոտումը կարևորել է հենց Ղատարանը:

Վերոգրյալ իրավանորմերից, եզրահանգումներից և պատճառաբանություններից ելնելով՝ Վերաքննիչ ղատարանը գտնում է, որ Ղատարանը հետամուտ չի եղել գործով օբյեկտիվ ճշմարտության բացահայտմանը և այդ ուղղությամբ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածով սահմանված իրավունքի իրացմամբ՝ գործն ի պաշտոնե քննելով, չբավարարվելով կողմերի կողմից ներկայացված ապացույցներով, կամ այդպիսի ապացույցներ չներկայացնելու փաստի արձանագրմամբ, չի պարզել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածով սահմանված՝ գործն ի պաշտոնե քննության նպատակով իր իրավունքներն իրացնելիս հետամուտ չի եղել դրանց արդյունքների ստացմանը՝ ապացույցների հավաքագրմանը, հետագոտմանը և զննահատմանը, ինչի արդյունքում խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ և 24-րդ հոդվածները:

Վերոգրյալ ամբողջի համատեքստում, գտնելով, որ առկա են բավարար հիմքեր Ղատարանի թիվ ՎԴ/4392/05/11 վարչական գործով կայացրած վճիռն ամբողջությամբ բեկանելու համար, միաժամանակ կարևորելով վերոշարադրյալ հանգամանքների և փաստերի պարզումն ու ապացույցների հավաքագրումն ու հետագոտումը՝ Վերաքննիչ ղատարանը գտնում է, որ կիրառելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.13-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ վերաքննիչ ղատարանի լիազորությունը, պետք է վերաքննիչ բողոքը բավարարել մասնակի՝ թիվ ՎԴ/4392/05/11 վարչական գործով կայացրած վճիռն ամբողջությամբ բեկանել և գործն ուղարկել նոր քննության՝ սույն որոշմամբ արտահայտված դիրքորոշման շրջանակներում: Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին՝ Վերաքննիչ ղատարանը գտնում է, որ այդ հարցն ենթակա է լուծման գործի նոր քննության արդյունքում: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 117.13-րդ և 117.14-րդ հոդվածներով՝ Վերաքննիչ ղատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

Վերաքննիչ բողոքը բավարարել մասնակի՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2013 թվականի մայիսի 29-ի թիվ ՎԴ/4392/05/11 վարչական գործով կայացրած վճիռն ամբողջությամբ բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Ղատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքում:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և նույն ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴՍՏԱԿՈՐ ԴՍՏԱԿՈՐ ԴՍՏԱԿՈՐ  
Ա.ԲԱԲԱՅԱՆ Հ.ԲԵԴԵՎՅԱՆ Ա.ՍԱՐԳՅԱՆ

Ղատական ակտի ամսաթիվը:	04-12-2013
Ակտով հոգուտ պետ. քյուջեի բռնագանձման ենթակա պետ. ( ՀՀ դրամ):	0

<b>Ամսաթիվ:</b>	08-01-2014
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ամսաթիվ:</b>	03-02-2014
<b>Ամսաթիվ:</b>	03-02-2014
<b>Էջերի քանակ:</b>	3 հատորից. 1-ին հատորը՝ 121 թերթից, 2-րդ հատորը՝ 69 թերթից, 3-րդ հատորը՝ 88 թերթից
<b>Գործին կից նյութերը:</b>	
<b>Գործն ուղարկվել է:</b>	03-02-2014
<b>Ուր:</b>	Վարչական
<b>Գրության համարը:</b>	797/14
<b>Այլ նշումներ:</b>	